

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐՁՐ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**



www.enpi-fleg.org

EUROPEAN NEIGHBORHOOD AND PARTNERSHIP INSTRUMENT (ENPI) EAST COUNTRIES FOREST LAW ENFORCEMENT AND GOVERNANCE (FLEG) II PROGRAM COMPLEMENTARY MEASURES FOR ARMENIA & GEORGIA



Program is funded by the Austrian Development Agency (ADA) with funds of Austrian Development Cooperation and implemented by the World Bank in partnership with IUCN and WWF


Ժ.Հ. Վարդանյան, Տ.Ս. Դանիելյան, Գ.Մ. Ֆայվուշ, Մ.Յ. Քալաշյան, Ա.Հ. Ղուլիջանյան, Ա.Է. Գևորգյան, Ս.Ռ. Գալստյան

Հայաստանում բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույց: Եր., Էդիթ Պրինտ, 2016.- 124 էջ + 8 էջ քարտեզ:

Ուղեցույցը պատրաստվել է «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» հասարակական կազմակերպության կողմից WWF հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ FLEG II ծրագրի շրջանակներում Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ:

Սույն գործնական ուղեցույցը միտված է մեթոդական հիմքերի ստեղծմանը, որոնք կօգնեն բացահայտելու կենսաբազմազանության պահպանության և տեղական բնակչության առօրյա պահանջները բավարարող էական և անփոխարինելի դեր ունեցող արժեքավոր անտառային տարածքները: Այն նախատեսվում է անտառում գործնական միջոցառումներ իրականացնողների, որոշումներ ընդունողների, ինչպես նաև գիտնականների, տեղական համայնքների ներկայացուցիչների և ընդհանրապես անտառի հիմնախնդիրներով հետաքրքրվող կազմակերպությունների ու անձանց համար:

- © WWF-Հայաստան/WWF-Armenia
- © «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ/ Biodiversity and Landscapes Conservation Union NGO

 AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION This guide has been produced with the assistance of the Austrian Development Agency (ADA) with funds of Austrian Development Cooperation. The content, findings, interpretations, and conclusions

of this guide are the sole responsibility of the Biodiversity and Landscapes Conservation Union NGO and can in no way be taken to reflect the views of the Austrian Development Cooperation. The views expressed do not necessarily reflect those of the Implementing Organizations.

Այս ուղեցույցը պատրաստվել է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) աջակցությամբ Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ: Ուղեցույցում զետեղված բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ն: Ուղեցույցի բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Ավստրիական զարգացման համագործակցության տեսակետները: Ներկայացված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ծրագրի գործընկերների տեսակետները:

ISBN 9789939750804

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ԲԱԺԻՆ 1. ԲԲԱԱ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ	
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	8
1.1. ԲԲԱԱ հայեցակարգը	8
1.2. ԲԲԱԱ տիպերը և ենթատիպերը	9
ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԲԱԱ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	16
2.1. Համառոտ տեղեղեկատվություն Հայաստանի անտառների վերաբերյալ՝ կարգավիճակը, հիմնական միտումները և սպառնալիքները	16
2.2. Ազգային մակարդակում ԲԲԱԱ հայեցակարգային դրույթների կիրառմանը խոչընդոտող և աջակցող գործոնները	21
ԲԱԺԻՆ 3. ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԲԲԱԱ ՏԱՐԲԵՐ ՏԻՊԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	28
3.1. ԲԲԱԱ տարբեր տիպերի առանձնացման համար չափանիշների և շեմքերի ընտրություն	28
3.2. ԲԲԱԱ-ի որոշման գործընթացի փուլերը.....	29
3.3. Հայաստանում ԲԲԱԱ-ի ընտրության մեթոդաբանական սկզբունքները	32
ԲԱԺԻՆ 4. ԲԲԱԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ	55
ԱՍՓՈՓՈՒՄ.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Անտառային էկոհամակարգեր պարունակող ԲՀՊՏ-ներ	62

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Անտառային տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ (կարգավիճակ CR և EN).....	66
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Անտառային տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակներ (կարգավիճակ CR և EN)	79
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Անտառային էկոհամակարգերի հետ կապված «Էմերալդ» էկոլոգիական ցանցի տարածքները (սայթերը) Հայաստանում (Բեռնի կոնվենցիայի շրջանակներում)	85
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Հայաստանի անտառներում հանդիպող Բոննի կոնվենցիայի հավելվածում ներառված տեսակները	88
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Անտառային էկոհամակարգերի հետ կապված Հայաստանի կարևորագույն բուսաբանական տարածքներ (ԿԲՏ)	92
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Հայաստանի կարևորագույն թռչնաբանական տարածքներ (ԿԹՏ), որոնք ընդգրկում են անտառային էկոհամակարգեր	94
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Հայաստանի հավաքյալ անտառային բնակմիջավայրերը	98
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Անտառային էկոհամակարգերի կողմից տրամա- դրվող ծառայությունները ըստ անտառտնտեսություն- ների, 2006-2010 թթ. -ի ԱԿՊ -ների համաձայն (հա)	108
ՀԱՎԵԼՎԱԾ 10. Պիլոտային տարածքում առանձնացված ԲԲԱԱ-ների նկարագրությունը	110
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	117

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԿՊ	Անտառկառավարման պլան
ԲԲԱԱ	Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառ
ԲՀՀ/ WWF	Բնության համաշխարհային հիմնադրամ
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
ԲՊՆ	Բնապահպանության նախարարություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԿԲՏ	Կարևորագույն բուսաբանական տարածք
ԿԹՏ	Կարևորագույն թռչնաբանական տարածք
Հա	Հեկտար
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

- CR (Critically endangered) կրիտիկական վիճակում գտնվող
DD (Data deficient) տվյալները լիարժեք չեն գնահատման համար
EN (Endangered) վտանգված
VU (Vulnerable) խոցելի

ՆԵՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ կենսաբանական էակների համար անտառները հանդիսանում են գոյության միջավայր, և դրանց ոչնչացումը լրջագույն սպառնալիքներ է առաջացնում կյանքի բնականոն զարգացման համար: Դժբախտաբար երկրագնդի անտառածածկ տարածքները գնալով կրճատվում են, ինչը որոշ երկրներում նույնիսկ զանգվածային բնույթ է կրում: Մինչդեռ մարդկանց կապվածությունը անտառի հետ բազմաբնույթ է և խորը: Բոլորիս անհրաժեշտ են անտառների շնորհիվ առաջացող թթվածինը, մաքուր օդը և կայուն ու բարենպաստ կլիման, իսկ շատերի համար անտառի կողմից տրամադրվող բարիքները գոյության հիմնական աղբյուր են հանդիսանում:

Ինտենսիվ արդյունաբերական շահագործումից անտառների որոշ մասի պահպանության անհրաժեշտությունը գիտակցվել է արդեն շատ վաղուց և ոչ միայն բնության պաշտպանների շրջանում: Այդ մոտեցումն իր զարգացումն է ստացել անտառների կայուն կառավարման այն դրույթներում, որ անտառօգտագործողը, չնվազեցնելով անտառների արտադրողականությունը, միաժամանակ չի փոփոխում անտառների էկոհամակարգային ծառայությունների ծավալն ու բնույթը և չի վտանգում անտառային կեսաբազմազանությունը: Միայն այդ դեպքում անտառն ապահովում է ինչպես տեղական բնակչության, այդպես էլ ընդհանուր առմամբ հասարակության նյութական և սոցիալական կարիքները:

Նման մոտեցումը միջազգային հարթակում իր արտացոլումն է ստացել Անտառի հոգաբարձուների խորհրդի (FSC) կողմից սահմանված բարձր բնապահպանական արժեք

ունեցող անտառների (ԲԲԱԱ) ընտրության, առանձնացման և պահպանության հայեցակարգում: Կուտակված բազմամյա փորձը ցույց է տալիս, որ անտառային կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների պահպանության համար անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած անտառային տարածքի մոտ 20%-ը զերծ լինի ինտենսիվ շահագործումից, ուստի գրեթե այդպիսի մակերես էլ պետք է կազմեն տարածաշրջանի ԲԲԱԱ-ները: Եթե որևէ անտառի բնապահպանական արժեքը գնահատվում է բարձր, ապա ակնհայտ է նրա պահպանության անհրաժեշտությունն անտառակառավարման ժամանակ: Ի դեպ ԲԲԱԱ-ի պահպանությունն անհրաժեշտ պայման է այն անտառօգտագործող կառույցների համար, որոնք ցանկանում են անցկացնել անտառի կամավոր հավաստագրում: Այս առումով Հայաստանում ԲԲԱԱ-ների որոշումը կարող է նպաստել անտառի կայուն կառավարման խթանմանը:

Հիմք ընդունելով նման միջազգային սկզբունքները, FLEG II ծրագրի շրջանակներում 2015-2016 թթ. մշակվել է սույն ուղեցույցը, որը նախատեսվում է անտառում գործնական միջոցառումներ իրականացնողների, որոշումներ կայացնողների, ինչպես նաև գիտնականների, տեղական համայնքների ներկայացուցիչների և ընդհանրապես անտառի հիմնախնդիրներով հետաքրքրվող կազմակերպությունների ու անձանց համար:

ԲԱԺԻՆ 1. ԲԲԱԱ ՀԱՑԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1. ԲԲԱԱ հայեցակարգը

Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների հայեցակարգը առաջարկվել է Անտառի հոգաբարձուների խորհրդի կողմից 1999 թ. -ին: Հայեցակարգով պահպանությունը դարձավ անհրաժեշտ պայման անտառի կամավոր հավաստագրում անցկացնող անտառօգտագործող կառույցների համար: Ներկայումս այս հասկացությունն ունի ավելի լայն օգտագործման շրջանակներ՝ կիրառվելով տարածքների գործառնական գոտիավորման կամ բնության պահպանության գերակա օբեկտների ընտրության համար: Համաձայն այդ հայեցակարգի ԲԲԱԱ-ների խմբին դասվում են այն անտառները, որոնք անհրաժեշտ են մարդկանց գոյության, ինչպես նաև Երկիր մոլորակի կենսոլորտի պահպանության համար: ԲԲԱԱ-ի առանցքային դերը կապված է դրանց բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող արժեքների հետ:

ԲԲԱԱ հայեցակարգի հիմնական բնութագրերը հետևյալն են.

1. Հայեցակարգը գիտականորեն հիմնավորված է, այն հիմնվում է առավել մատչելի էկոլոգիական և սոցիալական տեղեկատվության վրա՝ դրանով էլ ապահովելով բարձր բնապահպանական արժեքի բացահայտման հնարավորությունը:

2. Հայեցակարգը նախատեսում է շահագրգիռ կողմերի լայն մասնակցությունը ԲԲԱԱ-ի որոշման և առանձնացման գործընթացներում, ինչը անհրաժեշտ է որպեսզի համապատասխան որոշման ընդունման ընթացքում հաշվի առնվեն հետաքրքրությունների հնարավոր լայն շրջանակները:

3. Հայեցակարգը կարող է կիրառվել տարբեր տիպի անտառներում՝ տայգայի, բարեխառն կամ արևադարձային գոտու, բնական կամ արհեստական, քանի որ բնապահպանական բարձրարժեք տիպին անտառի պատկանելիությունը հիմնվում է բացառապես դրանում համապատասխան օբյեկտների կամ հատկությունների առկայության վրա:

4. Հայեցակարգի միջոցով կարելի է գնահատել տարբեր չափի տարածքներ: Ընդունվում է, որ ԲԲԱԱ-ները կարող են զբաղեցնել խոշոր անտառային զանգվածի փոքր մասը կամ շատ ավելի մեծ տարածք:

Ամեն դեպքում ԲԲԱԱ հայեցակարգի հիմքում դրված է այն գաղափարը, որ հատուկ կամ առանցքային արժեքի առկայության դեպքում անտառի բարվոք վիճակն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ գործողություններ՝ անտառօգտագործման ընթացքում նման արժեքները պահպանելու համար:

1.2. ԲԲԱԱ տիպերը և ենթատիպերը

Համաձայն վերը նշված հայեցակարգի, որպես ԲԲԱԱ-ներ կարող են առանձնացվել տարատեսակ անտառներ, որոնք տարբերվում են արտաքին տեսքով, կառուցվածքով, մակերեսով, տնտեսական արժեքով, հետազոտման մակարդակով, ինչպես նաև իրավական

պաշտպանվածության աստիճանով: ԲԲԱԱ կարող է հանդիսանալ խոշոր անտառային զանգվածի մի մասը, օրինակ՝ գետի երկայնքով պաշպանական գոտում գտնվող տեղամաս կամ հազվագյուտ էկոհամակարգ հանդիսացող հատված:

Ներկայումս հիմնականում օգտագործվում է անգլիական ProForest կազմակերպության կողմից առաջարկված ԲԲԱԱ-ի դասակարգումը (2004), որի համաձայն ԲԲԱԱ-ը բաժանվում են հետևյալ տիպերի՝

ԲԲԱԱ 1. անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածարջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանություն: Իր հերթին, այս տիպը բաժանվում է հետևյալ ենթատիպերի՝

ԲԲԱԱ 1.1. ԲՀՊՏ-ներ,

ԲԲԱԱ 1.2. հազվագյուտ և անհետացող տեսակների կուտակման տեղամասեր,

ԲԲԱԱ 1.3. էնդեմիկ տեսակների կուտակման տեղամասեր,

ԲԲԱԱ 1.4. կենդանիների առանցքային սեզոնային ապրելավայրեր,

ԲԲԱԱ 2. խոշոր անտառային լանդշաֆտներ, որոնք ունեն միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն,

ԲԲԱԱ 3. անտառային տարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր,

ԲԲԱԱ 4. անտառային տարածքներ, որոնք իրակա-
նացնում են պաշտպանական հատուկ գործառույթներ: Այս
տիպը բաժանվում է ենթատիպերի՝

ԲԲԱԱ 4.1. ջրապաշտպան հատուկ նշանակություն
ունեցող անտառներ,

ԲԲԱԱ 4.2. հակաէռոզիոն հատուկ նշանակություն
ունեցող անտառներ,

ԲԲԱԱ 4.3. հակահրդեհային հատուկ նշանակություն
ունեցող անտառներ,

ԲԲԱԱ 5. անտառային տարածքներ, որոնք անհրա-
ժեշտ են տեղական բնակչության կենսագործունեության
ապահովման համար,

ԲԲԱԱ 6. անտառային տարածքներ, որոնք անհրա-
ժեշտ են տեղական բնակչության մշակութային ավանդույթ-
ների պահպանման համար:

Նշված ԲԲԱԱ վեց տիպերի որոշումը, առանձնա-
ցումը և արդյունավետ կառավարումը սերտորեն կապված է
տվյալ երկրի առանձնահատկությունների հետ՝ անտառա-
յին զանգվածների վիճակի, կենսաբազմազանության
հարստության և դրա պահպանության համար տարվող
քաղաքականության, անտառների կառավարման կառույց-
ների, անձնակազմի պատրաստակամության և այլն:

ԲԲԱԱ 1 տիպն ընդգրկում է ամենահարուստ
կենսաբազմազանություն ունեցող տարածքներ՝ կենսաբազ-
մազանության «թեժ կետեր», անհետացող, կրիտիկական
վիճակում գտնվող, էնդեմիկ տեսակների բնակմիջավայրեր,
եզակի էկոլոգիական կամ տաքսոնոմիական խմբավորում-

ներով, կենդանիների սեզոնային խոշոր կուտակումներով տեղամասեր:

Բնականաբար նման անտառները շատ դեպքերում ներառվում են բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգում, որոնք ըստ դասակարգման կազմում են ԲԲԱԱ 1.1 ենթատիպը: Շատ կարևոր է նաև ԲԲԱԱ 1.2 ենթատիպի առանձնացումը, քանի որ հազվագյուտ և անհետացող տեսակներն առավել խոցելի են բնակմիջավայրի կորստի, որսագողության, հիվանդությունների հանդեպ և դրանց պոպուլյացիաները պահպանության կարիք ունեն: ԲԲԱԱ 1.3 ենթատիպը սահմանում է էնդեմիկ տեսակներով հարուստ անտառային տարածքները: Այդ տեսակների սահմանափակ տարածումն անբարենպաստ պայմանների դեպքում սպառնում է դրանց գոյությանը: ԲԲԱԱ 1.4 ենթատիպը ներառում է թռչունների բնադրավայրերը, կենդանիների միգրացիոն ուղիները և միջանցքները, ինչպես նաև սեզոնային կուտակումների տարածքները (օրինակ՝ ձմեռային կերակրման կամ ամառային բազմացման տարածքներ):

ԲԲԱԱ 2 տիպը սահմանվել է այն խոշոր անտառային զանգվածների համար, որոնց էկոհամակարգերում ընթացող բնականոն գործընթացները վերջին ժամանակում չեն ենթարկվել (կամ շատ քիչ են ենթարկվել) մարդածին ազդեցության: Ամբողջ աշխարհում խոշոր անտառային լանդշաֆտները գնալով պակասում են, դրանցից շատերը վերացման վտանգի տակ են՝ հատումների, մասնատման և դեգրադացիայի պատճառով: ԲԲԱԱ-ի այս տիպը հավանաբար բացակայում է այն երկրներում, որտեղ անտառային

լանդշաֆտների օգտագործումը մեծ չափերի է հասնում: Ամեն դեպքում անհրաժեշտ է պարզել, թե նախկինում և ներկայումս կատարվող անտառօգտագործումը և առկա սպառնալիքները ինչքանով են փոփոխել անտառի էկոհամակարգային ծառայությունների բնույթը և ազդել բազմազանության պահպանման բնական ունակությունների վրա:

ԲԲԱԱ 3 տիպը սահմանվել է այն անտառային էկոհամակարգերի համար, որոնք հազվագյուտ են բնական պատճառով (կլիմայական կամ երկրաբանական պայմաններ) կամ հազվագյուտ են դարձել մարդու գործունեության հետևանքով, օրինակ՝ բնական էկոհամակարգերը գյուղատնտեսական հանդակների վերափոխման արդյունքում: Հաճախ հենց դրանք ապագայում հայտնվում են վերացման վտանգի տակ: Նման անտառներում կարող են հանդիպել ինչպես հազվագյուտ, այնպես էլ լայն տարածում ունեցող տեսակներ:

Տարածաշրջանին բնորոշ անտառային էկոհամակարգերը կամ տեսակների կուտակումների տեղամասերը, որոնք հազվագյուտ ու վտանգված չեն, չեն համարվում ԲԲԱԱ:

ԲԲԱԱ 4 տիպը սահմանվել է տարբեր պաշտպանական գործառնություններ իրականացնող անտառների համար: Բոլոր անտառներն իրականացնում են կարևոր բնական գործառնություններ՝ ջրահոսքերի և ջրային ռեժիմի կարգավորում, հողի էռոզիայի կանխարգելում և այլն: Անտառի կայուն կառավարման դեպքում այդ գործառնությունը պահպանվում են, հակառակ դեպքում հետևանքները կարող են աղետալի լինել: Օրինակ՝ անտառի հատումը թեք լանջերի

վրա միանշանակ մեծացնում է սողանքների և սելավների հավանականությունը:

ԲԲԱԱ այս տիպը բաժանվում է երեք ենթատիպի՝

- *ջրապաշտպան հատուկ նշանակություն ունեցող անտառներ (ԲԲԱԱ 4.1)*, որոնք կարևոր դեր են կատարում ջրային ռեժիմի կարգավորման, ջրի որակի պահպանման, ջրահոսքերի կայունացման գործում: Եթե նման անտառները զբաղեցնում են ջրհավաք ավազանի խոշոր մասը, ապա կարող են որոշիչ դեր խաղալ այդ գործառույթների կատարման առումով: Որքան բարձր է տվյալ տարածքում ջրօգտագործման պահանջարկը, հեղեղումների կամ երաշտի ռիսկը, այնքան բարձր է հավանականությունը, որ այդ զանգվածը կհամարվի ԲԲԱԱ 4,

- *հակաէռոզիոն հատուկ նշանակություն ունեցող անտառները (ԲԲԱԱ 4.2)* կատարում են այլ բնական գործառույթ, որի շնորհիվ նպաստում են լանդշաֆտի կայունությանը՝ կանխելով հողի էռոզիան, սողանքները, սելավները: Այն տարածքներում, որտեղ հողի էռոզիան, սողանքները, սելավները սպառնում են բնությանը և մարդածին օբյեկտներին, բերելով հողերի արտադրողականության անկմանը և նույնիսկ մարդկային զոհերին, անտառների դերը կտրուկ բարձրանում է և դրանք համարվում են ԲԲԱԱ-ներ,

- *հակահրդեհային հատուկ նշանակություն ունեցող անտառներ (ԲԲԱԱ 4.3):* Հայտնի է, որ բնական և մարդածին պատճառներ ունեցող անտառային հրդեհները երբեմն դառնում են կործանարար աղետներ, որոնք վտանգ են ներկայացնում մարդկանց, տնտեսությանը և բնության համար: Նշված ենթատիպը ներառում է այն անտառները,

որոնք կատարելով իրենց բնական պաշտպանական գործառույթները, խոչընդոտ են հանդիսանում հրդեհների տարածման համար:

ԲԲԱԱ 5 տիպն առանձնացվում է տեղական բնակիչների գոյության հիմնական աղբյուրների պահպանման և դրանց բարվոք ապագայի երաշխավորման համար այն դեպքերում, եթե մարդիկ անտառում են հայթհայթում կյանքի կարևորագույն պահանջմունք հանդիսացող գոյության միջոցներ՝ վառելիք, մթերք, անասնակեր, դեղամիջոցներ կամ շինանյութ, իսկ այլընտրանքային աղբյուրը բացակայում է: ԲԲԱԱ-ների այս տիպին չեն պատկանում՝

- անտառները, որոնց բարիքներն օգտակար են տեղաբնակների համար, բայց անհրաժեշտ չեն գոյատևման առումով,

- անտառները, որոնք տրամադրում են ռեսուրսներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարելի է ստանալ այլ տեղերում կամ կարելի է փոխարինել համանմաններով:

ԲԲԱԱ 6 տիպն առանձնացվում է, որպեսզի պահպանվի տեղական համայնքների ավանդական մշակույթը այն տարածաշրջաններում, որտեղ անտառը հանդիսանում է անհրաժեշտ միջավայր բնակչության յուրօրինակության դրսևորման համար: Դրանցից են կրոնական, հնագիտական, ավանդական հանգստի և տոնակատարությունների համար նշանակություն ունեցող տեղամասերը, սրբավայր հանդիսացող աղբյուրները, գերեզմանատները և այլն:

**ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԲԱԱ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՆԵՐՐԻՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1. Համառոտ տեղեկատվություն Հայաստանի անտառների
վերաբերյալ՝ կարգավիճակը, հիմնական միտումները և
սպառնալիքները**

Լանդշաֆտների, բնական և լեռնագրական առանձնահատկությունների բազմազանությունը, հարուստ երկրաբանական պատմությունը և մարդածին գործոնի տարաբնույթ ազդեցությունները հանգեցրել են Հայաստանում շատ տարբեր անտառային համակեցությունների կազմավորմանը: Դրանք ներկայացված են մեծաքանակ բուսաբանական համակեցություններով և անտառային տիպերով:

Հայաստանում անտառածածկ տարածքներն անհավասարաչափ են բաշխված: Անտառների 62.5 %-ը (207000 հա) գտնվում են հյուսիս-արևելյան, 13.5 %-ը (45000 հա)՝ կենտրոնական, 2.4 %-ը (8000 հա)՝ հարավային և 21.6 %-ը (72000 հա)՝ հարավ-արևելյան շրջաններում: Հիմնական անտառկազմող տեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին և սոճին: Ուղեկցող տեսակները ներկայացված են դաժու, թխկու, լորենու, կեչու, թեղու, հացենու և այլ ծառատեսակներով: «Լուսավոր» անտառները հիմնականում ներկայացված են գիհու նոսրանտառներով:

Հաճարենու անտառները գտնվում են Հայաստանի միայն հյուսիսում՝ 800-2000 մ բարձրությունների վրա, և աճում են հիմնականում հյուսիսային լանջերին: Կաղնու անտառներն ունեն բարդ և բազմազան կառուցվածք: Հանդի-

պում են Հայաստանի հյուսիսում, հարավում և կենտրոնական շրջաններում՝ ծովի մակարդակից 600-2200 մ բարձրությունների վրա: Սոճու անտառներում աճում են նաև բոխին, արևելյան կաղնին, հազվադեպ՝ հաճարենին: Ենթալպյան անտառները գտնվում են ծովի մակարդակից 1900-2300 մ բարձրությունների վրա: Այստեղ հանդիպում են Լիտվինովի կեչին, բարձրլեռնային թխկին և սովորական արոսենին, որոնք կազմում են ցածր լրիվությամբ ծառուտներ:

Համաձայն 2011 թ. GIZ-ի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332333 հա կամ երկրի ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը:

Հայաստանի անտառների 75 %-ը կառավարվում է ՀՀ ԳՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, իսկ 25 %-ը (որոշ ԲՀՊՏ-ների անտառային զանգվածներ)՝ ՀՀ ԲՊՆ-ի կողմից: 2004-2009 թթ. ընդունվել են 6 մարզերի՝ Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանները (ԱԿՊ), իսկ Արագածոտնի, Հրազդանի, Գյումրու և Երևանի ոչ մեծ անտառտնտեսությունների ԱԿՊ-ները վերջին անգամ մշակվել են 1988-90 թթ.-ին:

ՀՀ ԲՊՆ ենթակայության ներքո գտնվող որոշ ԲՀՊՏ-ներում գերակշռում են անտառածածկ տարածքները: Դրանցից են «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցները, «Դիլիջան» և «Արևիկ» ազգային պարկերը, ինչպես նաև մի շարք արգելավայրեր: ԲՀՊՏ-ներում անտառային լանդշաֆտները զբաղեցնում են 110 269.2 հա՝ կազմելով ԲՀՊՏ-ների ընդհանուր տարածքի 28.5 %-ը: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կող-

մից կառավարվում են 13 անտառային արգելավայրեր, որոնցում ներկայումս անհրաժեշտ է իրականացնել սահմանների ճշգրտում և կառավարման պլանների մշակում:

Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների ու բարիքների ծավալը և քանակը չափազանց մեծ է: Սակայն անտառային էկոհամակարգերի վրա մարդածին ազդեցության հետևանքով (անտառների գերշահագործում, անկանոն հատումներ, արածեցում, խոտհունձ, հողազավթումներ և այլ) անտառային տարածքները ներկայումս կրճատվում են, տեղի են ունենում տեսակային կազմի և կառուցվածքային փոփոխություններ, ծառուտները կորցնում են բնական վերականգնման ունակությունը և նվազում է դրանց արտադրողականությունը:

Չհամակարգված անտառահատումները դեռևս հանդիսանում են անտառների քայքայման հիմնական պատճառ: Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառահատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը: Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պաշտոնական տվյալների՝ 2008-2015 թթ. նկատվել է ապօրինի ծառահատումների ծավալների զգալի նվազում՝ հիմնականում գազամատակարարման համակարգի զարգացման շնորհիվ: Ապօրինի անտառահատումների կանխարգելման խնդրում որոշ դրա-

կան ազդեցություն է ունեցել 2011 թ. ՀՀ կառավարության N 1535-Ն որոշումը, համաձայն որի անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին թույլատրվում է սեփական միջոցներով մթերել և անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելափայտ:

Անտառների քայքայման մյուս պատճառը վերականգնման ենթակա անտառներում անասունների անարգել մուտքն է, հատկապես համայնքամերձ անտառային տարածքներում, որի հետևանքով բնական սերմնային վերականգնումը գրեթե բացակայում է:

Վերջին տասնամյակներին անթրոպոգեն ազդեցության հետ մեկտեղ կլիմայի փոփոխությունը ևս մեկ կարևոր արդեն իսկ ռիսկային գոտում գտնվող անտառային էկոհամակարգերին լրացուցիչ սպառնացող գործոն է հանդիսանում: Ըստ ՀՀ Կլիմայի փոփոխության մասին Երկրորդ ազգային հաղորդակցության՝ կլիմայի փոփոխության արդյունքում անտառների ստորին սահմանը կտեղաշարժվի վեր՝ 250-300 մ և որպես հետևանք անտառային էկոհամակարգի կառուցվածքում տեղի կունենան էական փոփոխություններ, ինչը նաև կհանգեցնի անտառի սանիտարական վիճակի վատթարացման: Հետևաբար, եթե չկատարվեն հարմարվողականության միջոցառումներ, ապա մինչև 2030 թ. կարող է գրանցվել 14-ից մինչև 17.5 հազ. հա անտառի կորուստ:

Հայաստանում վերջին տասնամյակի ընթացքում դիտվում է անտառային հրդեհների դեպքերի քանակի և դրանց հետևանքով այրված տարածքների զգալի աճի միտում: Առավել շոգ 2001, 2006, 2010 և 2011 թթ.-ին հրդեհների հետևանքով այրվել են 1633 հա անտառներ:

Անտառային էկոհամակարգերին զգալի վնաս են պատճառում վերջին շրջանում դիտվող վնասատուների (հատկապես տերևակեր միջատների) զանգվածային համաճարակները, ինչը պահանջում է անտառապաշտպանական հրատապ աշխատանքների իրականացում: Ընդհանուր առմամբ՝ 2003-2013 թթ. ընթացքում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքներն իրականացվել են 76786 հատարածքներում: Պայքարի այդ ձևը վնաս է հասցնում անտառային կենսաբազմազանությանը:

Անտառները հիմնականում տեղակայված են բարձր թեքությամբ լանջերին և կախված լանջի թեքությունից ու բնակլիմայական պայմաններից, ինչպես նաև սեյսմիկ իրավիճակից՝ արդեն իսկ շատացել են սողանքները, ավելացել են հողմատապալ և ձնետապալ տարածքները, ակտիվացել են էրոզիոն-սելավային գործընթացները, տեղատարվում է սևահողը, որի վերարտադրությունը լեռնային պայմաններում շատ երկար ժամանակ է պահանջում: Բնական աղբյուրների և գետ-գետակների զգալի մասը դարձել է սակավաջուր, ինչը արդեն իսկ էական վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին:

Հայաստանին բնորոշ սակավ անտառածածկի պայմաններում անտառազրկումն էական սպառնալիք է: Այն կարող է կործանարար հետևանքներ ունենալ շրջակա միջավայրի համար, ինչպես նաև բերել եկամուտների զգալի կորստի՝ երկարաժամկետ ազդեցության արդյունքում էկոհամակարգային ծառայությունների ծավալների և քանակ-

ների կրճատման հետևանքով: Համաձայն էկոհամակարգային մոտեցման, անտառները պետք է կառավարվեն դրանց հիմնական արժեքների պահպանման և մարդկանց համար արդար ու հավասարապես բաշխված օգուտների ապահովման միջոցով: Հետևաբար, Հայաստանի անտառների վիճակի բարելավումը և բնապահպանական նշանակության հատկանիշների ապահովումը հնարավոր է միայն անտառի կայուն կառավարման դեպքում: Վերջինիս կարևորագույն պայմաններից է լիարժեք կամ մասնակի պահպանության ենթակա տարածքների առանձնացումը և դրանց կառավարման համար համապատասխան ռեժիմների կիրառումը: Նման հնարավորություն կարող է ստեղծվել, մասնավորապես, ԲԲԱԱ հայեցակարգային սկզբունքների ներդրման դեպքում:

2.2. Ազգային մակարդակում ԲԲԱԱ հայեցակարգային դրույթների կիրառմանը խոչընդոտող և աջակցող գործոնները

Հայաստանում անտառների և կենսաբազմազանության պահպանության և կառավարման քաղաքականությունն իրականացվում է հիմք ընդունելով մի շարք օրենսդրական ակտերի և ռազմավարական փաստաթղթերի դրույթները: Դրանցից կարևորվում են՝ «ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը», «ՀՀ անտառային օրենսգիրքը», «ՀՀ անտառի ազգային ծրագիրը», «ԲՀՊՏ-ների մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ ԲՀՊՏ-ների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը» և «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերար-

տաղրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը»:

Ինչպես ցույց է տալիս այդ փաստաթղթերի վերլուծությունը, «ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը (2004)», «ՀՀ անտառային օրենսգիրքը (2005)» և «ՀՀ անտառի ազգային ծրագիրը» (2005) չեն պարունակում դրույթներ կամ հոդվածներ, որոնք սահմանում են բնապահպանական բարձրարժեքության հասկացությունն անտառների համար: Սակայն Անտառային օրենսգրքում ամրագրված են պաշտպանական և հատուկ նշանակության անտառների հատկանիշները և դրանց օգտագործման սահմանափակումները, ինչը այնուամենայնիվ թույլ է տալիս զուգահեռներ տանել որոշ ԲԲԱԱ-ների տիպերի հետ:

Որոշ անտառտնտեսությունների ԱԿՊ-ներում առկա է «Բնապահպանական բարձրարժեք անտառներ» ենթաբաժինը, որտեղ զետեղված է ընդհանուր տեղեկատվություն ԲԲԱԱ-ների, բնապահպանական բարձրարժեքության տիպերի, ազգային մակարդակով ԲԲԱԱ-ների ընտրության անհրաժեշտության մասին և այլն: Ի դեպ տարբեր անտառտնտեսությունների կառավարման պլաններում այդ ընդհանուր բնույթի տեղեկատվությունը նույնությամբ կրկնվում է, միաժամանակ ԱԿՊ-ները չեն նախատեսում որևէ գործողություն ԲԲԱԱ-ների ընտրության և պահպանության ուղղությամբ: ԲՀՊՏ-ների համար մշակված և հաստատված կառավարման պլանները («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» պետական արգելոց) նույնպես չեն պարունակում հատուկ

դրույթներ կամ գործողություններ ԲԲԱԱ-ների առանձնացման ու կառավարման մասին:

Հարկ է նշել, որ թեպետ անտառային կենսաբազմազանության պահպանության և օրտագործման սկզբունքները և մոտեցումներն ամրագրված չեն Անտառային օրենսգրքում, «ՀՀ անտառի ազգային ծրագիրը» նախանշում է անտառային կենսաբազմազանությամբ հարուստ առանցքային կենսատույերի առանձնացումը և պահպանությունը, ինչպես նաև անտառների հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ գործառնությունների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այդ նպատակով որպես կոնկրետ գործնական քայլ շեշտադրվում է անտառային կենսաբազմազանության հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության համար էտալոնային էկոհամակարգերի (տեղամասերի) բացահայտումը և քարտեզագրումը, ինչը կարող է նախադրյալ հանդիսանալ ԲԲԱԱ-ների որոշման համար:

«ՀՀ ԲՀՊՏ-ների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր» (2014) փաստաթղթում առկա է տեղեկատվություն խտացված արեալներով և կենսաբազմազանության հարստությամբ աչքի ընկնող մի շարք տարածքների՝ «թեժ կետերի» մասին, որոնք նպատակահարմար է ապագայում ընդգրկել ԲՀՊՏ-ների համակարգում: Հատկանշական է, որ նման կուտակումներ հայտնաբերվել են հանրապետության այն տարածքներում, որտեղ ԲՀՊՏ-ներ գոյություն չունեն, ինչն առավել արդիական է դարձնում դրանց ստեղծման անհրաժեշտությունը: Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգի ընդլայնումը ոչ միայն կա-

պահովի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների առավելագույն ընդգրկումը և էկոհամակարգերի ամբողջականությունը, այլև հիմքեր կստեղծի ազգային էկոլոգիական ցանց հիմնելու համար, ինչպես նաև ԲԲԱԱ 1.1 ենթատիպն ավելի հստակ որոշելու համար:

«ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը» (2015) փաստաթղթում շեշտադրվում է ԲԲԱԱ-ների նշանակությունը վայրի բնության պահպանության համար: Մասնավորապես նշվում է, որ անտառային կենսաբազմազանության պահպանության գործում բավարար չէ մշակել և իրականացնել անտառների վիճակի բարելավմանն ուղղված անտառտնտեսական միջոցառումները՝ ելնելով միայն արտադրական նպատակներից ու պահանջներից: Կառավարման պլաններում պետք է հաշվի առնվի ինչպես «բարձրարժեք բնապահպանական անտառների», այնպես էլ տնտեսապես արժեքավոր և «հասուն» անտառային զանգվածների վիճակը, որոնք անտառային կենսաբազմազանության շատ ներկայացուցիչների համար ապահովում են գոյության պայմաններ: Այդ նպատակով անհրաժեշտ է վերանայել ԱԿՊ-ները, ինչպես նաև նոր ԲՀՊՏ-ներ ստեղծելիս հաշվի առնել ԲԲԱԱ տարածքները: Որպես կարևոր գործողություն սահմանվել է՝ «1.3. Մշակել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ՝ ՀՀ ԲԲԱԱ որոշման չափանիշների մասին»:

ԲԲԱԱ-ի ընտրության համար կարևորվում է տարածքում կենսաբազմազանության առավել խոցելի բաղադ-

րիչների՝ հազվագյուտ և անհետացող տեսակների առկայությունը և պահպանության հատուկ միջոցառումների արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը: Հայաստանում այդ տեսակների ցանկը և դրանց մասին գիտական տվյալները զետեղված են ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում, որոնք իրավական կարգավիճակ են ստացել 2010 թ.՝ ՀՀ կառավարության N 71-Ն և N 72-Ն որոշումներով:

Բնապահպանական ազգային քաղաքականությունը ձևավորվում է հիմք ընդունելով նաև այն միջազգային պարտավորությունները, որոնք երկիրը ստանձնում է համապատասխան միջազգային պայմանագրերին մասնակցելու շնորհիվ: ԲԲԱԱ-ի ընտրության համար նպաստավոր պայմաններ են ստեղծում Հայաստանի կողմից վավերացրած այն միջազգային կոնվենցիաները, որոնք ներդաշնակ են ԲԲԱԱ հայեցակարգային դրույթների հետ, իսկ դրանց շրջանակներում իրականացված գործողությունների արդյունքներն աջակցում են անտառային լանդշաֆտների և էկոհամակարգերի պահպանությանը:

Այսպես, Հայաստանի կողմից 2008 թ. վավերացրած «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի շրջանակներում առանձնացվել են «Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ» («Էմերալդ» ցանցի տարածքներ): Դրա համար հաշվի է առնվել այդ կոնվենցիայի հավելվածներում նշված վայրի բույսերի և կենդանիների տեսակների առկայությունը: Ի դեպ, առանձնացված 14 տարածքերից 12-ը անտառային բնույթի են (հավելված 4):

Կարևորագույն բուսաբանական տարածքների (ԿԲՏ) որոշումը և առանձնացումը Հայաստանում կատարվել է Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Բույսերի Պաշտպանության Գլոբալ Ռազմավարության պահանջների իրականացման նպատակով 2010-2012 թթ., որի ընթացքում, կիրառելով միջազգային չափանիշները, երկրում առանձնացվել են 18 ԿԲՏ, որոնք առնչվում են անտառային էկոհամակարգերի հետ (հավելված 6):

Կարևորագույն թռչնաբանական տարածքները (ԿԹՏ) միջազգային կարևորության տարածքներ են, որոնք ընդգրկում են մեկ կամ մի քանի թռչնատեսակների ամբողջ պոպուլյացիայի նշանակալի մի մասը: ԿԹՏ-ների որոշումը և առանձնացումը հանդիսանում է BirdLife International միջազգային կազմակերպության կողմից իրականացվող խոշոր միջազգային ծրագրի նպատակային խնդիրը, որին անդամակցում է նաև մեր երկիրը: Հայաստանում առանձնացված 18 ԿԹՏ-ից 12-ը կապված են անտառային լանդշաֆտների հետ (հավելված 7):

«Կովկասի էկոտարածաշրջանի պահպանության ծրագիրը» (WWF, 2006, 2012), ամբողջ տարածաշրջանի համար հանդիսանալով ռազմավարական նշանակության փաստաթուղթ, պարունակում է բազմաթիվ գործողություններ ինչպես տարածաշրջանային, այդպես էլ ազգային մակարդակներում իրագործելու համար: Դրա շրջանակներում առանձնացվել և նկարագրվել են այն տարածքները՝ էկոհամակարգերը և էկոլոգիական միջանցքները, որոնք առաջնային նշանակություն ունեն Կովկասի, այդ թվում Հայաստանի կենսաբազմազանության պահպանության համար

(Priority Conservation Areas and Corridors): Ծրագրում ներառվել են ԲԲԱԱ-ի հետ առնչվող հետևյալ միջոցառումները, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև 2020 թ. -ը՝

- ԲԲԱԱ-ների ընտրության մեթոդական ուղեցույցի մշակում,

- Էկոտարածաշրջանում նորմատիվային շրջանակների ստեղծում՝ բարձր բնապահպանական արժեքների հայեցակարգի ներդրման համար,

- ԲԲԱԱ դասակարգման և առանձնացման վերաբերյալ ուսուցումների անցկացում անտառկառավարող կառույցների համար:

Եզրակացնելով, կարելի է փաստել, որ ԲԲԱԱ-ի որոշման և պահպանման ուղղությամբ առ այսօր Հայաստանում կատարված գործողությունները սահմանափակ են, որի համար էական խոչընդոտ է հանդիսանում ազգային օրենսդրության անկատարությունը ինչպես իրավական հիմքի, այդպես էլ նորմատիվային գործիքների տեսակետից: Ազգային օրենսդրության մեջ դեռևս ամրագրված չէ ԲԲԱԱ հասկացությունը, իսկ նորմատիվային փաստաթղթերում (մասնավորապես ԱԿՊ-ներում)՝ արժեքավոր անտառների կառավարման մեխանիզմները: Որպես մեղմացնող հանգամանք հարկ է նշել, որ անտառային ոլորտի օրենսդրական հիմքերի մշակման ժամանակ բարձրարժեք անտառների գաղափարը դեռևս հստակ ձևավորված չէր, իսկ կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների նշանակությունն ու դրանց պահպանության համար հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունն ամբողջովին չէր գիտակցվում:

**ԲԱԺԻՆ 3. ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԲԲԱԱ ՏԱՐԲԵՐ
ՏԻՊԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**3.1. ԲԲԱԱ տարբեր տիպերի առանձնացման համար
չափանիշների և շեմքերի ընտրություն**

ԲԲԱԱ-ների մասին գաղափարախոսությունը հիմնը-վում է օբյեկտի/տարածքի համար նման արժեքի հայտնաբերման և պահպանման սկզբունքի վրա: Հենց Բարձր բնապահպանական արժեքի առկայությունը նախապայման է հանդիսանում մտածելու, արդյոք այդ անտառը կարելի է դասել ԲԲԱԱ-ի շարքին, թե ոչ:

Բնապահպանական բարձրարժեքության որոշման գործընթացն իր մեջ ներառում է երկու կարևոր քայլ՝

1. սահմանել անտառային լանդշաֆտների իրական արժեքները՝ բուսականության որոշակի տիպերը, տեսակների կուտակումները, էկոհամակարգային որոշ ծառայությունները և այլն, և դրանց բնորոշման չափանիշները,

2. սահմանել շեմքեր յուրաքանչյուր տիպի և չափանիշի համար, որոնց հիման վրա եզրակացնել տվյալ տարածքի բարձր բնապահպանական արժեք ունենալու մասին:

Շեմքը որևէ չափանիշը բնութագրող փաստացի պարամետրն է (հաստատուն մեծություն)՝ քանակությունը, չափը, գտնվելու վայրը և այլն: Օրինակ՝ շեմք կարող է համարվել որոշակի տաքսոնոմիական խմբին պատկանող տեսակների նվազագույն քանակությունը կամ որոշակի տիպի էկոհամակարգի նվազագույն չափը կամ առանձնահատուկ կարևոր նշանակության պաշտամունքի օբյեկտի

առկայությունը: Եթե շեմքի մեծությունը չի կարող որոշվել մաթեմատիկական բանաձևի միջոցով կամ այն չունի քանակական արտահայտություն, ապա անհրաժեշտ է սահմանել հնարավորին հստակ, պարզ և համեմատելի շեմքեր: Սահմանված շեմքային պարամետրերը պարբերաբար կարող են վերանայվել՝ հաշվի առնելով դրանց փորձնական կիրառման եզրահանգումները, նոր հստակ և չափելի չափանիշների ընտրությունը կամ ազգային օրենսդրության փոփոխությունները:

Շեմքերի որոշման ժամանակ պետք է հաշվի առնել անտառային տնտեսության վարման համար ընդունվող որոշումների հետևանքները: Շատ բարձր շեմքային նշանակության սահմանումը կրերի արժեքավոր օբյեկտների ու հատկանիշների ոչ բավարար պահպանությանը, քանի որ կարևոր օբյեկտները կանտեսվեն: Շատ ցածր շեմքային նշանակության դեպքում ԲԲԱԱ-ի կարգավիճակ կարող են ստանալ չհիմնավորված մեծ քանակությամբ անտառային տարածքներ, ինչը կստեղծի ավելորդ դժվարություններ անտառտնտեսության վարման համար:

3.2. ԲԲԱԱ-ի որոշման գործընթացի փուլերը

Չափանիշները և շեմքերը սահմանելուց հետո, անհրաժեշտ է իրականացնել նախնական գնահատում: Դրա նպատակն է, օգտագործելով առկա տեղեկատվությունը, արագ բացառել այն անտառային լանդշաֆտները, որոնք ի սկզբանե զուրկ են բարձր բնապահպանական արժեքներից, ինչպես նաև ընտրել անտառային տարածքներ, որոնք կարող են ստանալ ԲԲԱԱ կարգավիճակ: Նման նախնական գնա-

հատումը հաճախ չի պահանջում մեծաքանակ նոր տվյալների հավաք: Կարելի է օգտվել առկա տարաբնույթ հետազոտությունների և տվյալների վերլուծություններից, որոնցով արդեն առանձնացվել են տարբեր արժեքների պահպանության համար կարևոր տարածքներ կամ տեսակներ: Դրանց շարքին դասվում են տեսակներ, որոնք ընդգրկված են Հայաստանի կողմից վավերացված տարբեր միջազգային կոնվենցիաների հավելվածներում (Բեռնի կոնվենցիա, Բոննի կոնվենցիա), կամ արդեն իսկ առանձնացված Հայաստանի ԿԲՏ-ները, որոնք գրեթե համընկնում են կենսաբազմազանության «թեժ կետերի» հետ, ԿԹՏ և «Էմերալդ» ցանցի տեղամասերը (ներկայացված են համապատասխան հավելվածներում): **Շատ դեպքերում վերը նշված տարածքների մասին առկա տեղեկությունները կամ որոշ վայրերում նման տեսակների առկայության տվյալները կողմնորոշիչ ինդիկատորի դեր են խաղում՝ հեշտացնելով ԲԲԱԱ ընտրությունը:**

Նոր հետազոտություններ անհրաժեշտ են այն դեպքերում, եթե առկա տվյալները հնացած են կամ պահանջվում է հավաքել լրացուցիչ տվյալներ՝ էկոլոգիական և սոցիալական արժեքների ամբողջ սպեկտրի բացահայտման համար: Այդ գործընթացը տեղի է ունենում լիամասշտաբ/ամբողջական գնահատման փուլում՝ նախնական փուլում ընտրված պոտենցիալ ԲԲԱԱ տարածքներում: Ամբողջական գնահատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել տարբեր ոլորտային հետազոտությունների համադրումը/սինթեզը: Օրինակ՝ հազվագյուտ թռչունների բնակմիջավայր հանդիսացող անտառների բացահայտման մեթոդը անտարակույս շատ օգտակար է ԲԲԱԱ-ի առանձնացման համար, սակայն այս

տեղեկատվությունն անշուշտ պետք է լրացվի այլ տաքսոնոմիական խմբերի մասին ստացված տվյալներով (օրինակ՝ կանթնաստունների, անոթավոր բույսերի), որպեսզի ապահովվի ԲԲԱԱ-ի որոշման համար անհրաժեշտ հիմնավորումը:

Այնուամենայնիվ, ստորև բերված ցանկում ներկայացված են ԲԲԱԱ առանձնացման գործընթացում անհրաժեշտ տեղեկությունների հիմնական աղբյուրները՝

1. Գործնական ուղեցույցի հավելվածներ,
2. Անտառտնտեսությունների ԱԿՊ-ներ,
3. ԲՀՊՏ-ների կառավարման պլաններ,
4. Գիտական մենագրություններ և հոդվածներ, որոնցից հիմնականները նշված են գրականության ցանկում,
5. ԲՊՄՄ Կարմիր ցուցակ,
6. ՀՀ Կարմիր գիրք (երկու հատոր),
7. ՀՀ օրենսդրական-նորմատիվ ակտեր,
8. ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր,
6. Մոցիալական հարցումների արդյունքներ:

Պոտենցիալ տարածքների բազմակողմանի հետազոտումը՝ բնապահպանական բարձր արժեքների բնույթը, ծավալը և տարածվածությունը պարզաբանելու և հստակեցնելու գործընթացը, բավական երկարատև ու ֆինասատար է: Նման ուսումնասիրությունները կարող են ֆինանսավորվել պետական բյուջեից և/կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից: Դրանք պահանջում են նաև տեխնիկական միջոցների և բարձր որակավորում ունեցող համապատասխան մասնագետների ներգրավում (բուսաբաններ, կենդանաբաններ, քարտեզագրողներ, էկոլոգներ և այլն):

3.3. Հայաստանում ԲԲԱԱ-ի ընտրության մեթոդաբանական սկզբունքները

Հաշվի առնելով վերը շարադրվածը և հիմք ընդունելով ԲԲԱԱ կատեգորիաների միջազգային տիպաբանությունը՝ Հայաստանի տարածքում այս անտառների ընտրությունը առաջարկվում է իրականացնել հետևյալ սկզբունքների հիման վրա:

Տիպ ԲԲԱԱ 1. Անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանություն

Ենթատիպ ԲԲԱԱ 1.1. ԲՀՊՏ-ներ

***Ընդհանուր դրույթներ.** Ելնելով երկրի առանձնահատկություններից, ԲՀՊՏ-ի կատեգորիայից, դրանում առկա անտառների և կենսաբազմազանության վիճակից, որպես ԲԲԱԱ 1.1 կարող է սահմանվել պահպանվող տարածքը ամբողջությամբ կամ դրա անտառային զանգվածի որոշակի մասը: Առաջին տարբերակը հիմնականում տարածվում է ԲՊՄՄ-ի դասակարգմամբ առավել խիստ ռեժիմ ունեցող (արգելոցներ) կամ ավելի ցածր կատեգորիայի այն պահպանվող տարածքների վրա, որոնք բացառիկ նշանակություն ունեն կենսաբազմազանության պահպանության համար: Երկրորդ տարբերակի դեպքում ԲՀՊՏ-ի միայն որոշ անտառային լանդշաֆտներ կարող են ստանալ ԲԲԱԱ կարգավիճակ, այն պայմանով, որ դրանք համապատաս-*

խանում են ԲԲԱԱ 1 տիպի այլ ենթատիպերի չափանիշներին: Ի դեպ այս դրույթը տարածվում է բոլոր առկա ԲՀՊՏ-ների, ինչպես նաև դրանց ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորված վկայություն ունեցող անտառների վրա:

Ըստ ԲՊՄՄ դասակարգման Հայաստանում առկա I-IV կատեգորիաների ԲՀՊՏ-երի (արգելոցներ, ազգային պարկեր, արգելավայրեր, բնության հուշարձաններ) մեծամասնությունը ներառում են անտառային էկոհամակարգեր (հավելված 1), որոնք իրենց կարգավիճակով կարող են համապատասխանել ԲԲԱԱ 1.1. ենթատիպին: Սակայն, ստեղծման պահին տարբեր անխաթարության աստիճան և հետագայում տարբեր պահպանության ռեժիմ ունեցող ԲՀՊՏ-ների անտառները միշտ չէ, որ ունեցել են և այժմ էլ ունեն բարձր բնապահպանական արժեք: Հետևաբար Հայաստանի պահպանվող տարածքների անտառների միայն որոշ մասը կարող է հավակնել ԲԲԱԱ 1 տիպի կարգավիճակ ստանալուն: Նման եզրահանգումն առաջին հերթին տարածվում է ազգային պարկերի ու արգելավայրերի վրա, որտեղ ոչ բոլոր անտառային տարածքները կարող են դիտարկվել որպես միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող վտանգված կենսաբազմազանության պահպանության օջախներ:

ՀՀ պետական արգելոցների (I կատեգորիա ըստ ԲՊՄՄ-ի դասակարգման) կենսաբազմազանության բազմաթիվ արժեքավոր տեսակների համար հուսալի բնակատեղ հանդիսացող անտառային էկոհամակարգերը համարվում են 1 տիպի ԲԲԱԱ:

Համաձայն «ԲՀՊՏ-ների մասին» ՀՀ օրենքի **ազգային պարկերի** տարածքները (II կատեգորիա ըստ ԲՊՄՄ-ի դասակարգման) ենթակա են գոտիավորման, որի արդյունքները ներառվում են ազգային պարկերի կառավարման պլաններում: Առանձնացված արգելոցային գոտիները բնորոշվում են միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանության առկայությամբ և պահպանության ավելի խիստ ռեժիմով: **Ազգային պարկերի արգելոցային գոտիների անտառներին նույնպես շնորհվում է ԲԲԱԱ 1 կարգավիճակ:**

Ազգային պարկերի այլ գոտիներում (ԲԲԱԱ 1 տիպ հայցող պոտենցիալ տարածքներ) Բարձր բնապահպանական արժեքի առկայությունը վկայագրելու համար (օրինակ՝ ռեկրեացիոն գոտու անտառներում) անհրաժեշտ է իրականացնել ամբողջական գնահատում՝ դրանց իրական էկոլոգիական և սոցիալական արժեքների բացահայտման նպատակով:

Ըստ ԲՊՄՄ-ի դասակարգման ավելի ցածր կատեգորիա (III-IV) ունեցող **բնության հուշարձանները և արգելավայրերը** անտառային այլ տարածքների պես ենթակա են ամբողջական գնահատման: Բարձր բնապահպանական արժեքի առկայության մասին դրական արդյունք ստանալու դեպքում, այս անտառները կարող են ձեռք բերել ԲԲԱԱ 1 կամ այլ տիպի կարգավիճակ:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.2. Հազվագյուտ և անհետացող տեսակների կուտակման վայրեր

Ենթատիպ ԲԲԱԱ 1.3. Էնդեմիկ տեսակների կուտակման վայրեր

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 1.2. և ԲԲԱԱ 1.3. ենթատիպերին պատկանող անտառային տարածքները բնորոշվում են բուսա-կենդանական աշխարհի ներկայացուցիչների հազվագյուտությամբ և վտանգված ու էնդեմիկ տեսակների առկայությամբ: Նման տարածքները որոշվում և առանձնացվում են առաջատար գիտական կառույցների կամ միջազգային հայտնի հասարակական կազմակերպությունների կողմից և հաճախ համընկնում են ԿԹՏ-ի և ԿԲՏ-ի և այլ նման տարածքների հետ:

Հայաստանի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բուսական և կենդանական որոշ տեսակների մասին տվյալները ներառված են ՀՀ Կարմիր գրքում (երկու հատոր, 2010 թ.): Ընդհանուր առմամբ Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկվել են բարձրակարգ բույսերի 452 և սնկերի 40 տեսակ, իսկ կենդանիների Կարմիր գրքում՝ 308 տեսակ (155 անողնաշար և 153 ողնաշարավոր կենդանիներ): Բոլոր այս տեսակները գնահատվել են ըստ ԲՊՄՄ չափանիշների, որոնց միջոցով պարզաբանվել է տեսակների հազվագյուտության և անհետացման վտանգի տակ գտնվելու աստիճանը:

Անտառային տարածքներում առավել մտահոգություն առաջացնող կրիտիկական վիճակում գտնվող (CR) և վտանգված (EN) բուսական ու կենդանական տեսակների ցուցակները բերվում են հավելված 2 և 3-ում: Բնականաբար,

CR և EN գնահատված տեսակները անհետաձգելի պահպանության կարիք ունեն և անտառային էկոհամակարգերում դրանց կենսունակ պոպուլյացիաների հայտնաբերումն առաջնային պայման է անտառների բարձր բնապահպանական արժեքի որոշման տեսակետից: Այն անտառային տարածքները, որտեղ ըստ նախնական գնահատման առկա են վտանգվածության ավելի ցածր մակարդակ ունեցող կենսաբազմազանության տարրեր՝ խոցելի տեսակներ (VU) կամ տեսակներ, որոնց տարածվածության վերաբերյալ տվյալները լիարժեք չեն գնահատման համար (DD), գնահատվում են որպես ԲԲԱԱ պոտենցիալ տարածքներ և ենթակա են հետագա հետազոտման:

Հարկ է նշել, որ այս ենթատիպի ԲԲԱԱ-ի առանձնացման համար ՀՀ Կարմիր գրքում առկա տեղեկատվության որպես հիմք օգտագործումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Հաշվի է առնվել, որ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում ընդգրկված CR, EN, VU կարգավիճակ ունեցող գրեթե բոլոր տեսակները նույնպես ներառված են ՀՀ Կարմիր գրքում, իսկ ավելի ցածր կարգավիճակ ունեցողների (օրինակ՝ DD տեսակներ) առկայությունը տարածքում չի ստեղծում անհրաժեշտ ապացույցներ անտառի բարձր բնապահպանական արժեքի որոշման համար: Բացի դրանից ԲՊՄՄ Կարմիր ցուցակի օգտագործումը սահմանափակվում է այն պատճառով, որ ներկայումս դրա մեջ որոշ կարգաբանական խմբեր գրանցվել են ամբողջությամբ՝ անկախ դրանց բնապահպանական արժեքից և վտանգվածության կարգավիճակից:

Այսպիսով, ՀՀ Կարմիր գրքում CR և EN կարգավիճակ ունեցող բույսերի և կենդանիների տեսակների առկայության դեպքում անտառային տարածքները կարող են գնահատվել որպես ԲԲԱԱ-ներ (ենթատիպ ԲԲԱԱ 1.2):

Մակայն, այդ տեսակները բավական շատ են (բույսեր՝ 359, սնկեր՝ 31, անողնաշարներ՝ 112, ողնաշարավորներ՝ 44 տեսակ), իսկ դրանց դաշտում հայտնաբերելու համար մարդկային ռեսուրսները՝ սահմանափակ: Հետևաբար առաջարկվում է բավարարվել աչքի ընկնող և առավել հրապուրիչ գերակա տեսակներով (Flagship species), որոնք հեշտությամբ կարող են որոշվել անգամ համապատասխան մասնագիտական որակավորում (բուսաբան, կենդանաբան) չունեցող անտառային տնտեսությունների աշխատակիցների կողմից:

Գերակա տեսակների թվին առաջարկվում է դասել խոշոր ողնաշարավոր կենդանիներին, որոնք լավ հայտնի են անտառային տնտեսությունների աշխատակիցներին, խոտաբույսերի և թփերի բարձր գեղազարդությամբ օժտված տեսակները, առավել արժեքավոր և հազվագյուտ ծառաբույսերը, վառ և առավել բնութագրական անողնաշար կենդանիներին (նշված են աստղանիշով հավելված 2 և 3-ում):

Այսպիսով, հաշվի առնելով Հայաստանին բնորոշ պայմանները և երկրի հարուստ կենսաբազմազանությունը, ԲԲԱԱ 1 (ենթատիպ 1.2) առանձնացման դեպքում Հայաստանի Կարմիր գրքում CR և EN կարգավիճակ ունեցող տեսակների համար սահմանվում է հետևյալ նվազագույն շեմքը՝ տվյալ անտառային տարածքում հանդիպող ընդհանուր

առմամբ 5 բույսերի/կենդանիների տեսակներ կամ 3 գերակա տեսակներ:

Եթե տարածքում հանդիպում են նվազագույն շեմքից ավելի քիչ թվով համապատասխան տեսակներ, ապա դրա առանձնացումը որպես ԲԲԱԱ նպատակահարմար է միայն բացառիկ դեպքերում՝ երբ տվյալ տեսակը իրոք արժեքավոր է ոչ միայն երկրի համար, այլ ունի համաշխարհային մակարդակով մեծ նշանակություն, օրինակ՝ ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ վտանգվածության բարձր կարգավիճակով:

Ինչ վերաբերում է կոնսկրետ հազվագյուտ/գերակա տեսակների պոպուլյացիաների կամ կուտակումների պահպանության համար անհրաժեշտ նվազագույն տարածքի սահմանման հարցին, ապա անհրաժեշտ է կիրառել անհատական մոտեցում: Հաշվի առնելով հետազոտվող վայրի արտաքին էկոլոգիական պայմանները և տեսակների բնութագրական տվյալները՝ այս տարածքի չափերը կարող են տատանվել 10 հա-ից մինչև ողջ անտառային էկոհամակարգի սահմանները:

Այսպիսով, 1.2 ենթատիպի ԲԲԱԱ-ի առանձնացման համար հիմնական չափորոշիչ է հանդիսանում տվյալ անտառային էկոհամակարգում Հայաստանի Կարմիր գրքում CR կամ EN կարգավիճակ ունեցող սահմանված քանակով բույսերի և/կամ կենդանիների տեսակների առկայությունը: Որպես լրացուցիչ առավելություն հաշվի է առնվում այն հանգամանքը, որ նշված անտառային տարածքներում առկա են Բեռնի և Բոննի կոնվենցիաների շրջանակներում (հավելված 4 և 5) պահպանության ենթակա տեսակներ կամ եթե

դրանք հանդիսանում են Հայաստանի ԿԲՏ (հավելված 6) կամ ԿԹՏ (հավելված 7):

Հայաստանի տարածքը բնութագրվում է բազմաթիվ նեղ տարածվածություն ունեցող տեսակների առկայությամբ, որոնք հանդիսանում են երկրի, Անդրկովկասի և Կովկասի էկոտարածաշրջանի տարբեր կենսաշխարհագրական տեղամասերի էնդեմիկներ: Հայաստանի էնդեմիզմի աստիճանը առավել բարձր է բույսերի (144 տեսակ՝ ֆլորայի 3.8 %-ը) և անողնաշար կենդանիների մոտ (մոտ 500 տեսակ՝ ֆաունայի շուրջ 3%-ը, հիմնականում միջատներ): Ողնաշարավորներից այսպիսի տեսակներն եզակի են, սակայն կան մի շարք Կովկասի և Անդրկովկասի էնդեմիկներ: Ընդ որում, Հայաստանի էնդեմիկ բույսերի գերակշռող մասը ընդգրկված է ՀՀ Կարմիր գրքում և հաճախ բարձր կարգավիճակով՝ CR կամ EN: Էնդեմիկ ողնաշարավոր կենդանիների մեծամասնությունը ՀՀ Կարմիր գրքում ունեն VU կամ DD կարգավիճակ և ԲԲԱԱ 1.3 ենթատիպի առանձնացման ընթացքում դրանց լրացուցիչ ուսումնասիրությունը կարող է հանգեցնել նույնիսկ դրանց կարգավիճակի վերագնահատմանը: Նույնը վերաբերում է որոշ նեղ տարածվածություն ունեցող այն ողնաշարավոր կենդանիներին (առավելագույնս՝ սողուններ), որոնք ընդհանրապես գրանցված չեն Կարմիր գրքում: Հարկ է նշել, որ անողնաշար էնդեմիկ կենդանիների զգալի մասը ՀՀ Կարմիր գրքում նույնպես գրանցված չէ և չի գնահատվել ըստ ԲՊՄՄ չափորոշիչների:

Այնուամենայնիվ, ԲԲԱԱ 1.3 ենթատիպի առանձնացման համար էնդեմիկ տեսակների կուտակումներ ունեցող վայրերի հստակ որոշման նպատակով անհրաժեշտ է հաշվի

առնել նման տեսակների գոույթունն ապահովող անտառա-
յին բնակավիջավայրերի առանձնահատկությունները, դրանց
էկոլոգիական և կենսաբանական հատկանիշները: Ընդհա-
նուր առմամբ, մոտեցումները և չափորոշիչները նմանատիպ
են ԲԲԱԱ 1.2 ենթատիպի ընտրության համար կիրառվող
մեթոդաբանությանը: Որպես նվազագույն շեմք սահմանվում
է տվյալ անտառային տարածքում հանդիպող ընդհանուր
**առմամբ 5 էնդեմիկ բույսերի/ կենդանիների տեսակների առ-
կայությունը**: Այդ տեսակների բարձր կարգավիճակը (CR
կամ EN), ինչպես նաև գնահատվող տարածքում կենսունակ
խոշոր պոպուլյացիաներ առաջացնելու ունակությունը
ընտրված տարածքին լրացուցիչ բնապահպանական արժեք
է հաղորդում:

Ի դեպ պետք է շեշտադրել, որ չնայած ԲԲԱԱ 1.2 և 1.3
համարվում են վերը նշված տեսակներով հարուստ տա-
րածքներ, որոնք համապատասխանում են սահմանված չա-
փանիշներին, սակայն պոտենցիալ տարածքների հետազոտ-
ման ընթացքում պետք է նկարագրվեն և քարտեզագրվեն ՀՀ
Կարմիր գրքում գրանցված և էնդեմիկ բոլոր տեսակները՝
տվյալների ամբողջականությունն ապահովելու և հետագա-
յում աշխատանքներն ընդլայնելու համար:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.4. Կենդանիների առանցքային սեզոնային ապրելավայրեր

Ընդհանուր դրույթներ. Ֆաունայի ներկայացուցիչների
գոյության և բնականոն զարգացման համար վճռորոշ դեր ու-
նեցող անտառային տարածքներ՝ կենդանիների բնադրա-
վայրեր, ձմեռման և չուի ժամանակ հանգրվանի տեղանքներ,

կենդանիների սնման և ջրման տեղամասեր, դրանց միգրացիոն ուղիներ և այլն, համապատասխան հիմնավոր ապացույցների դեպքում ստանում են ԲԲԱԱ 1.4 ենթատիպի կարգավիճակ:

Հայաստանում հանդիպող մի շարք ողնաշարավոր կենդանիներ, այդ թվում՝ հազվագյուտ և վտանգված, օգտագործում են անտառային էկոհամակարգերը սեզոնային կուտակումների և տեղաշարժի համար: Որպես կանոն դրանք լեռնային վերին գոտու բաց լանդշաֆտներին բնորոշ տեսակներն են, որոնք ձմեռային սեզոնը անցկացնում են տարբեր տիպի անտառային էկոհամակարգերում: Դրանցից են օրինակ՝ կովկասյան մարեհավը և բեզուարյան այծը: Այս կենդանիների տարածվածությունը, տեղաբաշխումը և սնման վայրերը, արտաքին պայմանների և կերային բազայի անփոփոխության դեպքում, մեծամասամբ ունեն մշտական բնութագրեր, ինչը թույլ է տալիս առանձնացնել ԲԲԱԱ 1.4 ենթատիպի անտառային տարածքները:

Անտառների հետ կապված են նաև մի շարք չվող տեսակներ, որոնք ընդգրկված են Բոննի կոնվենցիայի հավելված 1 և 2-ում: Դրանք Հայաստանում բնակվող բոլոր չվող չոչիկները և գիշատիչ թռչուններն են: Բացի այդ, ողնաշարավոր կենդանիների միգրացիոն ուղիները կարող են անցնել անտառային տարածքներով (սեզոնային և ընթացիկ), որոնք պահպանության կարիք ունեն: Այս միգրացիոն ուղիները կազմում են էկոլոգիական միջանցքների կարևոր բաղկացուցիչ մասը:

Այսպիսով, որպես ԲԲԱԱ 1.4 ենթատիպ պետք է դիտվեն՝

- անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների (անկախ վտանգվածության աստիճանից) սեզոնային կուտակումների և տեղաշարժի համար (այդ թվում միգրացիոն ուղիներ), նվազագույն շեմքը՝ 1 տեսակ,

- անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են Բոննի կոնվենցիայի շրջանակներում պահպանվող չվող տեսակների պոպուլյացիաների գոյատևումն ապահովելու համար, նվազագույն շեմքը՝ 2 տեսակ:

Տիպ ԲԲԱԱ 2. Միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող խոշոր անտառային լանդշաֆտներ, որտեղ գոյություն ունեն բնական պայմաններում հանդիպող տեսակների կենսունակ պոպուլյացիաներ՝ իրենց բնորոշ տարածվածությամբ և առատությամբ

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 2 տիպին են պատկանում անձեռնմխելի (համեմատաբար քիչ խաթարված) և կուտակյալ անտառային տարածքներ, որտեղ (1) բնական պայմաններում հանդիպում են բուսա-կենդանական աշխարհի գերակշռող մասի կամ բոլոր տեսակների կենսունակ պոպուլյացիաները և (2) ընթացող էկոլոգիական գործընթացները (օրինակ՝ բնական խախտումների հաճախականությունը, անտառային սուկցեսիաները, տեսակների տարածվածության փոփոխությունները և այլն) որոշակի ժամանակահատվածում լիովին կամ մասամբ չեն ենթարկվել մարդածին ազդեցության: Շրջակա միջավայրի բնական փոփոխու-

թյունների պարագայում նման տարածքների չափերը և վիճակն ապահովում են անտառի կենսակայունությունը և ինքնավերականգնման ունակությունը:

Հայաստանում այս տիպի անտառների առանձնացումը և նպատակային պահպանությունը գերկարևոր խնդիր է, քանի որ մեր երկրում անտառային էկոհամակարգերին սպառնում են բազմաթիվ վտանգներ (տե՛ս բաժին 2) և դեռևս բարվոք վիճակում գտնվող անտառային տարածքները գնալով կրճատվում են: Մինչդեռ հենց այդպիսի անտառային տարածքներն են ապահովում գլոբալ էկոլոգիական հավասարակշռությունը, այդ թվում բնական կլիմայական դրսևորումները:

ԲԲԱԱ 2 տիպի անտառների ընտրության և առանձնացման նպատակն է աջակցել տարբեր խճանկարային էկոհամակարգերից կազմված այն անտառային լանդշաֆտների պահպանությանը, որոնք իրենց բաղադրիչների, չափերի, կառուցվածքի և կապերի առումով առավելապես մոտ են բնական վիճակին: Հետևաբար, այդ տարածքներում պետք է բացակայեն բնական անտառային լանդշաֆտների խախտման ակնհայտ (ծառահատումներ, առանձին բուսական համակեցությունների տրանսֆորմացիա, բուսածածկի մասնատում) և անուղղակի (բնակավայրեր, ընդհանուր օգտագործման ճանապարհներ, այլ ենթակառուցվածքներ, հողերի գյուղատնտեսական նպատակով օգտագործման դեպքեր և այլն) նշանները: Այս տարածքների բարվոք վիճակի ապացույցներից են՝ տվյալ անտառային տիպին բնորոշ ֆիտոցենոզներ գոյացնող տեսակների բնական տարածվածությունը, քանակությունը և կազմը, տվյալ էկոլոգիական

պայմաններում ֆիզիոլոգիական հասունության հասած ծառերի առկայությունը (հասուն և գերհասուն), տվյալ անտառային տարածքի ամբողջ մակերեսի վրա քայքայման տարբեր փուլերում գտնվող տապալված և ցցաչոր ծառերի առկայությունը:

Ի դեպ, վերջին տարիներին անտառներում իրականացված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ԲՀՊՏ-ների սահմաններից դուրս առկա են ԲԲԱԱ 2 չափորոշիչներին համապատասխանող անտառզանգվածներ՝ 100-ից մինչև 2000 հա մակերեսով: Ելնելով դրանից Հայաստանի համար որպես նվազագույն շեմք ընտրվել է 300 հա՝ հաշվի առնելով նաև գործնականում պատշաճ պահպանության իրականացման հնարավորությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին 50 տարվա ընթացքում հատումներից և անասունների արածեցումից զերծ մնացած անտառներում բնական վերականգնման արդյունքում ծառուտների լրիվությունը 06-ից բարձր է: Խոսքը լայնատերև անտառների մասին է, քանի որ նշված մակերեսով ասեղնատերև չընդհատվող ծառուտներ Հայաստանում չկան:

Ընդհանուր առմամբ ԲԲԱԱ 2 տարածքները պետք է **միաժամանակ** համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝

- **300 հա-ից ոչ պակաս մակերես ունեցող անտառային լանդշաֆտներ,**

- **վերջին 50 տարիներին բնափայտային անտառօգտագործումից զերծ մնացած անտառային տարածքներ,**

- հասունացող և հասուն ու գերհասուն տարիքային խմբերին պատկանող անտառներ,
- ծառուտի 06 և բարձր լրիվություն ունեցող անտառներ,
- 10%-ից պակաս մասնատվածություն ունեցող անտառներ,
- անտառմշակույթներից զերծ մնացած տարածքներ:

Տիպ ԲԲԱԱ 3. Անտառային տարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 3 տիպին են պատկանում գլոբալ, տարածաշրջանային կամ ազգային նշանակության հազվագյուտ և/կամ յուրօրինակ անտառային էկոհամակարգեր, որոնք արագ կրճատվում են արտահայտված մասնատվածության և մարդածին ազդեցության պայմաններում: Նման անտառների էկոհամակարգերը կամ լայն տարածում ունեին անցյալում, բայց գրեթե ամբողջությամբ ոչնչացվել են մարդու գործունեության ընթացքում, կամ բնական պատճառներով միշտ հազվագյուտ են եղել՝ սահմանափակող էկոլոգիական պայմանների պատճառով:

Հայաստանում նման անտառային էկոհամակարգերի (կամ բնակմիջավայրերի) ընտրության և առանձնացման հիմքում դրվում է EUNIS (European Nature Information System) դասակարգման համակարգը՝ հարմարեցված տեղական պայմաններին: Նախկինում օգտագործվող երկրաբուսաբանական դասակարգումների համեմատ այս համակարգը

պարզ է ու հեշտ ընկալելի, հնարավորություն է ստեղծում միասնական նկարագրել կենդանիների և բույսերի բնակմիջավայրերը, լայնորեն կիրառվում է եվրոպական երկրներում և համադրելի է միջազգային կոնվենցիաներում օգտագործվող համակարգերի հետ:

Հավելված 8-ում բերվում են Հայաստանի 17 տիպի առավել հազվագյուտ անտառային բնակմիջավայրերը և դրանց տարածվածությունը ըստ մարզերի, ԲՀՊՏ-ների ու անտառտնտեսությունների: Այդ բնակմիջավայրերը ներառում են նաև վտանգված համարվող էկոհամակարգերը, որոնք ենթարկվում են տարբեր ռիսկերի և մարդածին ազդեցության: Դրանցից են գետերի առափնյա (տուգայան) անտառները, ինչպես նաև անտառի վերին սահմանը կազմող ծառաթփային շերտը: Ինչպես արդեն նշվել է, վերին սահմանների 200 մետր լայնությամբ տարածքը համարվում է պաշտպանական նշանակության անտառ և դրա համար սահմանվել է օգտագործման հատուկ ռեժիմ (ՀՀ Անտառային օրենսգիրք, հոդված 11): Ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառներին ԲԲԱԱ կարգավիճակ տալու մասին բացատրությունները բերվում են ԲԲԱԱ 4 տիպին վերաբերվող բաժնում:

ԲԲԱԱ 3 տիպի նվազագույն մակերեսը պետք է լինի 10 հա-ից ոչ պակաս: Եթե ընտրված էկոհամակարգի մակերեսն ավելի փոքր է, ապա անհրաժեշտ 10 հա-ը կարող է լրացվել դրա բուֆերային գոտու հաշվին, ինչը կապահովի բավարար պայմաններ պոպուլյացիաների բնական զարգացման համար:

ԲԲԱԱ 3 տիպի անտառների առանձնացման համար տարածքի ամբողջական գնահատման միջոցով բավական է արձանագրել հավելված 8-ում նշվող հազվագյուտ և/կամ անհետացման վտանգի տակ գտնվող որևէ էկոհամակարգ՝ առնվազն 10 հա տարածքով:

Նպատակահարմար չէ գնահատել անտառը որպես ԲԲԱԱ 3, եթե դրան հավակնող բնակմիջավայրը՝

- ունի փոքր մակերես, իսկ տարածաշրջանում (Հայաստանում, մարզում) առկա են մի քանի այլ ավելի մեծ նմանատիպ տարածքներ,

- ուժեղ դեգրադացված է տարածաշրջանի նմանատիպ այլ տարածքների համեմատ, որոնք ավելի բարվոք վիճակում են,

- գտնվում է անկայուն, սուկցեսիոն փոփոխությունների փուլում՝ պայմանավորված բնական կամ մարդածին գործոններով,

- նմանատիպ էկոհամակարգեր պահպանվում են տարածաշրջանի ԲՀՊՏ-ներում:

ԲԲԱԱ 3 տիպի առանձնացման համար լրացուցիչ առավելություն է տալիս գնահատվող տարածքում Բեռնի կոնվենցիայի 4-րդ բանաձևում ընդգրկված բնակմիջավայրերի առկայությունը (ա. հաճարենու անտառներ, բ. կաղնուբոխու անտառներ, գ. սոճու անտառներ, դ. կենու անտառներ), ինչպես նաև դրա պատկանելիությունը ԿԲՏ-ին:

**Տիպ ԲԲԱԱ 4. Անտառային տարածքներ, որոնք
իրականացնում են պաշտպանական հատուկ
գործառույթներ**

Անտառային տարածքների կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն անտառների ջրապաշտպան և հակաէռոզիոն գործառույթները, որոնք էական նշանակություն ունեն տարբեր էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման և մարդկանց կենսամակարդակի ու բարեկեցության ապահովման համար: ԲԲԱԱ 4 տիպի առանձնացումը և կառավարման բարելավումն ուղղված է այդպիսի անտառների խոցելիության նվազեցմանը և դրանց էկոհամակարգային ծառայություններին սպառնացող ռիսկերի կանխարգելմանը:

***Ենթատիպ ԲԲԱԱ 4.1. Ջրապաշտպան հատուկ
նշանակություն ունեցող անտառներ***

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 4.1 ենթատիպը սահմանված է ջրային օբյեկտների՝ գետեր, լճեր, լճակներ, ջրաճահճային տարածքներ, բնական ջրային գոյացումներ, առափնյա անտառների համար, որոնց պահպանությունը կարող է կանխարգելել անտառտնտեսական գործողությունների բացասական ազդեցությունը բնական հունների կայունության, ջրի որակի ու քանակի, ջրային էկոհամակարգերի բարվոք վիճակի վրա, ինչպես նաև պահպանել ափամերձ տարածքների տեսակային բազմազանությունը:

Նման անտառներն ապահովում են մաքուր ջրի շարունակական մատակարարում՝ կենցաղային, արդյունաբերական ու գյուղատնտեսական նպատակներով աճող ջրապահանջարկի պայմաններում:

Հայաստանի օրենսդրությամբ սահմանվել է ջրային օբյեկտների պաշտպանական գոտու առանձնացման սկզբունքը, որի չափերը և սահմանագծերը կախված են յուրաքանչյուր ջրային օբյեկտի առանձնահատկություններից: Հաճախ ջրային օբյեկտի ավիամերձ անտառային էկոհամակարգերը կայունացնում են ավիր հոսքի երկայնքով և ապահովում կարևոր բնակվիջավայր և միգրացիոն միջանցքներ մի շարք կաթնասունների ու թռչունների համար: Այդ անտառները կանխում են հողի էռոզիան ու ջրերի աղտոտումը, մակերևութային հոսքը կամ ունեն ջրի կլանման մեծ պոտենցիալ:

Ցանկացած անտառ ազդում է հարակից տարածքի հիդրոլոգիական ռեժիմի վրա, սակայն հաճախ այդ ազդեցությունը տեղային է և չի համարվում էական: Հայաստանի պայմաններում անտառները կարող են առանցքային և էական նշանակություն ունենալ ջրային ռեժիմի պահպանման համար և սահմանվել որպես ԲԲԱԱ 4.1 ենթատիպի անտառ, եթե դրանք բավարարում են հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

- **կանխարգելում են խմելու ջրի կորուստը տեղական բնակչության հիմնական ջրաղբյուրից,**

- **պաշտպանում են մոտ տեղակայված բնակավայրերը, գյուղատնտեսական նշանակության հողերը, ենթակառուցվածքները ջրհեղեղներից և երաշտներից,**

- պաշտպանում են ջրօգտագործման տարբեր ձևերի (կենցաղային, գյուղատնտեսական, արդյունաբերական, էներգետիկայի և այլն) համար անհրաժեշտ ջրային պաշարները մասշտաբային չվերականգնվող կորուստներից,

- ապահովում են գետերի ավամերձ տարածքների պահպանությունը՝ վճռորոշ դեր խաղալով ողողման հետևանքների վերահսկման և կանխարգելման գործում:

ԲԲԱԱ 4.1 ենթատիպի չափանիշներին համապատասխանող անտառների համար սահմանվում են հետևյալ շեմքերը՝

- 5 կմ-ից ավելի երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 200 մ լայնությամբ անտառաշերտերը,

- 3-5 կմ երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 100 մ լայնությամբ անտառաշերտերը,

- բնակավայրի խմելու ջրի գոյացման հիմնական աղբյուրի շուրջ 300 մ շառավիղով անտառաշերտերը,

- ջրամբարների շուրջ 200 մ շառավիղով անտառաշերտերը,

- աղբյուրների շուրջ 100 մ շառավիղով անտառաշերտերը:

Ենթատիպ ԲԲԱԱ 4.2. Հակաէռոզիոն հատուկ նշանակություն ունեցող անտառներ

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 4.2. ենթատիպը սահմանվում է այն անտառային տարածքների համար, որոնք ուսումնասիրության արդյունքում գնահատվել են որպես առավել խոցելի՝ հողի էռոզիայի, սողանքների, սելավների առաջացման առումով: Նշված երևույթները կարող են ազդե-

ցություն ունենալ հողային ռեսուրսների, ենթակառուցվածքների, մարդկանց բարեկեցության և առողջության վրա:

Անտառները կանխարգելում են բազմաթիվ վայրերին սպառնացող հողի էռոզիան, սողանքները և սելավները: Անտառների ոչնչացման պատճառով երբեմն անապատացման աստիճանին հասնող էռոզացված հողերի մակերեսը կտրուկ աճել է՝ ակտիվացել են սողանքային երևույթները: Եթե նման երևույթների առաջացման ռիսկը բարձր է, իսկ հետևանքները՝ ծանր, ապա տարածքի անտառների դերը գնահատվում է որպես էական և առանցքային: Այս ենթատեքստում ԲԲԱԱ 4.2 ենթատիպի համար սահմանվել են հետևյալ չափանիշները և շեմքերը՝

- **30⁰-ից ավել թեքության լանջերում տեղաբաշխված անտառներ,**

- **բնակավայրերի շրջակա սելավավտանգ լանջերին աճող 200 մ լայնությամբ անտառաշերտեր, 06 և ավելի լրիվությամբ և 10 հա նվազագույն մակերեսով:**

Հավելված 9-ում բերվում են տվյալներ Հայաստանի անտառտնտեսություններում տարբեր էկոհամակարգային ծառայություններ տրամադրող անտառային տարածքների մասին (աղբյուրը՝ ԱԿՊ):

ԲԲԱԱ 4.3 ենթատիպի անտառները (հակահրդեհային հատուկ նշանակություն ունեցող անտառներ) Հայաստանում բացակայում են:

**Տիպ ԲԲԱԱ 5. Անտառային տարածքներ, որոնք
անհրաժեշտ են տեղական բնակչության կենսա-
պահովման համար**

Ընդհանուր դրույթներ. ԲԲԱԱ 5 տիպը ներառում է տեղաբնակների համար մեծ կարևորություն ունեցող անտառային տեղամասեր, որոնք ծառայում են որպես սննդի, ջրի, վառելիքի, դեղամիջոցների, խոտհնձի և գոյության այլ կենսապահանջներն ապահովող անփոխարինելի տարածքներ: Անտառների կողմից տրամադրվող այդ բարիքները համարվում են բնակչության համար անփոխարինելի, եթե չկան դրանք ձեռք բերելու այլընտրանքային տարբերակները կամ դրանք հասանելի չեն գոնե տարվա որոշակի ժամանակահատվածում:

Հայաստանի բնակչության համար վառելափայտը կարևոր և անփոխարինելի պահանջարկներից է: Բազմաթիվ անտառամերձ համայնքներ (մասնավորապես, գազամատակարարում չունեցող կամ անվճարունակ բնակչություն ունեցող գազամատակարարված համայնքներ) ապավինում են վառելափայտի վրա՝ տաքացման և սննդի պատրաստման համար: Ավելի հազվադեպ են հանդիպում դեպքեր, երբ այլ անտառային ռեսուրսները՝ դեղաբույսեր ու կերային բույսեր, սնկեր, պտուղներ, որսակենդանիներ, անհրաժեշտ ու անփոխարինելի են տեղաբնակների գոյության համար: Ի դեպ, որպես վառելափայտի և այլ անհրաժեշտ ռեսուրսների համար բնակչության կողմից հիմնականում օգտագործվում են բնակավայրից միայն որոշակի հե-

ռավոտության վրա (մոտ 5 կմ) գտնվող անտառային տարածքներ:

Կարևոր է նաև հաշվի առնել այն անտառային տարածքները և ռեսուրսները, որոնց կայուն օգտագործումը զգալի լրացուցիչ եկամուտ է ապահովում՝ բարձրացնելով բնակիչների կենսամակարդակը: Եթե գյուղատնտեսությունը տեղական բնակիչների գոյատևման հիմնական միջոցն է, ապա գյուղատնտեսական կերհանդակների միկրոկլիմայի վրա բարենպաստ ազդեցություն ունեցող անտառները նույնպես համարվում են բարձրարժեք: ԲԲԱԱ 5 տիպի առանձնացման համար անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ անտառապահների, համայնքների ղեկավարների և տեղական բնակչության հետ, որի ընթացքում որոշակիացնել նման արժեքներ ունեցող պոտենցիալ անտառային տարածքներ: Մակայն ԲԲԱԱ 5 կարգավիճակ սահմանելու համար անհրաժեշտ կլինի անցկացնել լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական հետազոտում, որը բացի անտառային ռեսուրսների օգտագործման հարցերը, կբացահատի նաև անտառամերձ համայնքների բնակչության կենսապահովման որոշ ցուցանիշները:

Անտառային տարածքը կարող է ստանալ ԲԲԱԱ 5 տիպի կարգավիճակ, եթե այն համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝

- **անտառը հարակից է համայնքին, որը զագաֆիկացված չէ կամ զագաֆիկացված է, սակայն բնակչության մեծ մասը անվճարունակ է,**

- **անտառը հարակից է համայնքին, որը մագիստրալային ճանապահներիով կապված չէ խոշոր բնակավայրերի**

հետ, իսկ տարվա որոշ սեզոններին բնական անբարենպաստ պայմանների պատճառով ժամանակավորապես լրիվ մեկուսացված և կտրված է այլ վայրերից,

- **անտառը հարակից է համայնքին, որի բնակիչների նվազագույն զամբյուղի առնվազն 40% ապահովվում է անտառային ռեսուրսների օգտագործման հաշվին:**

Նշված չափանիշներինց որևէ մեկին համապատասխանող համայնքին կից **5 կմ շառավիղով անտառային գոտին** կարող է առանձնացվել որպես ԲԲԱԱ 5: Եթե նույնիսկ անտառը չի կարող լիովին բավարարել տեղաբնակների առօրյա պահանջները կամ օգտագործվում է տարվա միայն որոշակի ժամանակահատվածում, ապա անտառային ռեսուրսների հասանելիության նվազումը այնուամենայնիվ կարող է բացասաբար անդրադառնալ մարդկանց առողջության կամ նյութական բարեկեցության վրա: Այդ տեսակետից ԲԲԱԱ 5 տիպի անտառների ճիշտ կառավարումը նախադրյալներ է ստեղծում բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար: Այս տիպի անտառների կառավարումը պետք է ապահովի ռեսուրսների կայուն օգտագործում, եթե նույնիսկ համայնքները տնտեսական կախման մեջ են անտառներից: Ռեսուրսի ավանդական օգտագործումը չպետք է խաթարի անտառների վիճակը կամ բերի դրանց դեգրադացիային:

ԲԲԱԱ 6 տիպի անտառները հանդիսանում են անհրաժեշտ միջավայր բնակչության յուրօրինակ ավանդույթների դրսևորման համար: Հայատանում այդպիսի անտառներ գրեթե չկան, այդ պատճառով սույն ուղեցույցում դրանք չեն քննարկվում:

ԲԱԺԻՆ 4. ԲԲԱԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ

Անտառի բարձր բնապահպանական արժեքի բացահայտումը կարևոր է բոլոր օգտագործողների համար, սակայն առավել կարևոր է անտառկառավարողների համար: Բացահայտված արժեքները պետք է արժանանան հատուկ ուշադրության, իսկ համապատասխան տարածքները՝ դիտարկվեն որպես առանձին միավոր: Դրանց օգտագործման վերաբերյալ ռազմավարական գործողությունների վերաբերյալ որոշումների կայացմանը պետք է ակտիվորեն մասնակցեն բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ բնապահպանական ՀԿ-ները, համայնքների ներկայացուցիչները և տվյալ գիտական ոլորտի մասնագետները:

ԲԲԱԱ համարվում են բնության պահպանության կամ մարդկանց սոցիալական բարեկեցության տեսակետից առավել արժեքավոր անտառային տարածքները: Հետևաբար այդ արժեքների կորուստը կարող է սպառնալիք հանդիսանալ տարածքի և նույնիսկ ողջ երկրի համար: Այդ պատճառով նման տարածքների օգտագործումը պետք է հիմնվի անտառների ու դրանց գործառույթների մասին ժամանակակից գիտելիքների վրա, որպեսզի հնարավորին ճիշտ և հստակ որոշվեն նվազագույն ռիսկայնություն ունեցող անտառօգտագործման եղանակները: Տարբեր տիպի ԲԲԱԱ-ի բացահայտման դեպքում անտառային տնտեսությունների գործունեության պլանավարումն և վարումը չպետք է առաջացնի անտառային էկոհանակարգերի արժեքների նվազում կամ կորուստ: Բոլոր նախատեսվող անտառտնտեսական միջոցառումները պետք է մանրամասն

թվարկվեն և հստակ ամրագրվեն տվյալ անտառտնտեսության ԱԿՊ-ում:

ԲԲԱԱ կարգավիճակ տալու դեպքում, ԱԿՊ-ներում պետք է ներկայացվեն այդ կարգավիճակը հաստատող տեղեկությունները, ներառյալ քարտեզագրությամբ ճշգրտված ԲԲԱԱ չափերը և սահմանները, դրա վիճակը, զարգացման միտումները, սպառնալիքները: Անտառտնտեսությունների տարածքներում տարբեր տիպի ԲԲԱԱ-ները պետք է կառավարվեն համապատասխան ռեժիմներով՝ սահմանափակելով այդ տարածքներում տնտեսական գործունեությունը, ծառայեցնելով դրանք անտառային կենսաբազմազանության պահպանությանը, բնակչության սոցիալական պահանջների երկարատև բավարարմանը, էկոտուրիզմի զարգացմանը, ռեկրեացիոն կամ գիտակրթական նպատակներով օգտագործմանը:

ԲԲԱԱ կառավարումը կարող է իրականացվել երեք հիմնական եղանակներով՝

1. Տարածքի պահպանությունը լոկալ տեղամասերի (սահմանագատված կենսատոպերի) և դրանց շուրջ պաշտպանական գոտիների ստեղծման և արժեքի նվազեցմանը հանգեցնող ապօրինի գործունեության կանխարգելման միջոցով: Առանձին դեպքերում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող անտառտնտեսություններում ԲԲԱԱ առանձնացումից հետո այդ վայրերը կարող են առաջարկվել որպես ԲՀՊՏ՝ համապատասխան գիտական հիմնավորումների առկայության դեպքում:

2. Համապատասխան սահմանափակումների կամ հատուկ կարգադրությունների միջոցով անտառտնտես-

սակյան գործողությունների փոփոխություն, ինչը պետք է մանրամասնորեն արտահայտվի ԱԿՊ-ներում: Անհրաժեշտ է բացահայտել և վերլուծել իրականացվող անտառտնտեսական կամ ցանկացած այլ գործողության արդյունքում ԲԲԱԱ-ին սպառնացող վտանգները: Վերլուծությունը պետք է հաշվի առնի բոլոր հնարավոր հետևանքները՝ ուղղակի (օրինակ՝ անտառհատումները կամ քիմիական նյութերի օգտագործումը) և անուղղակի (օրինակ՝ անտառային ճանապարհների շինարարությունը, որը կարող է հասանելի դարձնել անտառային տարածքները և ավելացնել չկանոնակարգված որսորդությունը և հատումները): Մահմանափակումները պետք է գործեն այնքան ժամանակ, մինչև ստացվեն համոզիչ ապացույցներ, որ տվյալ գործունեությունը չի առաջացնում բացասական ազդեցություն տվյալ անտառային տարածքում: Նման մոտեցումը ցուցադրող օրինակներն են՝ հատումներ անցկացնելիս որոշակի տեսակի ծառերի պահպանում կամ կենդանիների որոշակի բնակմիջավայրերի նկատմամբ (սնման կամ բնադրման վայրեր) հատուկ մոտեցման կիրառում և այլն:

3. Անտառվերականգնման միջոցառումներ կարող են իրականացվել այն տարածքներում, որտեղ առաջացել է շտկման գործողությունների անհրաժեշտություն, օրինակ՝ ինվազիվ տեսակների վերացում կամ անտառի ափապաշտպան գործառնությունների վերականգնում:

ԲԲԱԱ կայուն կառավարման համար նախատեսված գործողությունների իրականացումը պետք է վերահսկվի մոնիթորինգի միջոցով: ԲԲԱԱ հայեցակարգի համաձայն մոնիթորինգի հիմնական նպատակն է որոշել արդյո՞ք

պահպանվում է տվյալ անտառի համար բացահայտված բարձր բնապահպանական արժեքը: Մոնիթորինգը թույլ է տալիս ստուգման ենթարկել կառավարման համակարգի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ըստ ԲԲԱԱ տիպի մոնիթորինգի հիմնական թիրախ պետք է լինեն այն հատկությունները, որոնց շնորհիվ տվյալ անտառային տարածքը համարվել է բարձրարժեք: Դա ենթադրում է, որ տարբեր տիպի ԲԲԱԱ-ի համար պետք է մշակել և կիրառել մասնագիտացված մոնիթորինգային ծրագրեր (մոնիթորինգային արձանագրություններ), որոնց միջոցով հնարավոր կլինի ստանալ և վերլուծության ենթարկել տվյալ ԲԲԱԱ-ի վիճակը բացահայտող անհրաժեշտ տեղեկությունները՝ խուսափելով լրացուցիչ ու չհիմնավորված գործողություններից:

Մոնիթորինգն իրականացվում է տվյալ ԲԲԱԱ-ի համար որոշված նպատակին և խնդիրներին համապատասխան: Դրանք սահմանվում են հաշվի առնելով տարածքին սպառնացող բնական ու մարդածին հիմնական վտանգները և դրանց հիմքում ընկած պատճառները/գործոնները: Հստակ ձևակերպված կառավարման խնդիրների հիման վրա պետք է ընտրվեն անտառային էկոհամակարգերի վիճակը բնորոշող մոնիթորինգային ինդիկատորները: Բնապահպանական արժեքների մոնիթորինգից բացի, առաջարկվում է մոնիթորինգի ենթարկել նաև կիրառվող կառավարման մեթոդները (օպերատիվ մոնիթորինգ)՝ ստուգելով դրանց համապատասխանությունը ԲԲԱԱ-ի կառավարման սկզբունքներին: ԲԲԱԱ-ի վիճակի ու փոփոխությունների վերլուծված ար-

դյունքների հիման վրա ԱԿՊ-ներում կարող են կատարվել համապատասխան ուղղումներ:

Ըստ ԲԲԱԱ տիպի պետք է որոշվեն և մոնիթորինգային ծրագրերում ամրագրվեն տվյալ անտառային տարածքի կարգավիճակը բնորոշող ինդիկատորները, մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը (տվյալների հավաքի մեթոդները, ժամկետները, պարբերականությունը, վերլուծության առաջարկները և այլն), ինչպես նաև մոնիթորինգ իրականացնող կառույցները կամ սուբյեկտները: Դրանք կարող են տարբերվել տարբեր տիպի ԲԲԱԱ-ներում՝ ելնելով դրանց էկոլոգիական պայմաններից, կենսաբանական ու սոցիալական արժանիքներից և կառավարման առանձնահատկություններից: Հետևաբար, ԲԲԱԱ-ների մոնիթորինգային ծրագրերը (մոնիթորինգային արձանագրությունները) կարող են լիարժեք տեղեկություններ տրամադրել անտառտնտեսությունում պահպանության և կայուն կառավարման առավել առաջնահերթություն ունեցող էկոհամակարգերի/տարածքների մասին: Որպես անտառի ընդհանուր մոնիթորինգի կարևորագույն մաս՝ այդ արձանագրությունները զգալի կնպաստեն անտառի կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը:

ԱՍՓՈՓՈՒՄ

Այս ուղեցույցը ստեղծվել է որպես մեթոդական հիմք կենսաբազմազանության պահպանության և տեղական բնակչության առօրյա պահանջները բավարարելու համար կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեցող արժեքավոր անտառային տարածքների ընտրության նպատակով՝ ղեկավարվելով ԲԲԱԱ-ի հայեցակարգային սկզբունքներով և հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները: Ուղեցույցում ներկայացվում են Հայաստանում տարբեր տիպի ԲԲԱԱ-ների ընտրության և առանձնացման մոտեցումները և չափանիշները, որոնց գործնական կիրառումը կարող է զգալի ներդրում ունենալ անտառի կայուն կառավարման հարցում:

ԲԲԱԱ ընտրության և առանձնացման առաջարկվող չափանիշները փորձարկվել են 11425 հա զբաղեցնող պիլոտային տարածքում (հավելված 10), ինչը թույլ տվեց գնահատել դրանց արդյունավետությունը և ճշգրտել շեմքային մեծությունները: Կարելի է եզրակացնել, որ ԲԲԱԱ-ի առանձին տիպերի համար առաջարկվող չափանիշները կարող են հաջողությամբ օգտագործվել անտառկառավարողների և այլ շահագրգիռ կառույցների կողմից Հայաստանում ԲԲԱԱ-ների ընտրության համար:

ԲԲԱԱ-ների առանձնացումը, դրանց մասին համապատասխան տեղեկությունների հավաքագրումը և շահագրգիռ կողմերին դրանց վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը կարող է նպաստել. ա) ԲՀՊՏ-ների համակարգում առկա բացերի բացայատմանը և նոր ԲՀՊՏ-ների ստեղծմանը, բ) լանդշաֆային և հողօգտագործման

պլանավորման տարածագործառնական տեսակետից հիմնավորված զարգացմանը, գ) բնապահպանական հիմքի վրա ԱԿՊ-ների մշակմանը, դ) անտառային տարածքների բազմագործառնական գոտիավորմանը: Հարկ է նշել նաև, որ ներկայումս բարձրարժեքավորման գործընթացը դուրս է գալիս անտառային սեկտորի սահմաններից և վերափոխվում է ԲԲԱԱ-ից՝ բնապահպանական բարձր արժեք ունեցող տարածքների որոշմանը (օրինակ՝ խոտածածկ տարածքներում):

Այս անտառների համար պետք է մշակվեն և ներդրվեն կառավարման համապատասխան եղանակներ՝ ուղղված տարածքի բարձր էկոլոգիական կամ սոցիալ-տնտեսական արժեքների պահպանմանն ու ավելացմանը:

Անտառային էկոհամակարգեր պարունակող ԲՀՊՏ-ներ

ԲՀՊՏ-ի անվանումը, մարզը	Ստեղծման նպատակը	Զբաղեցրած տարածքը (հա)
<u>ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐ</u>		
«Խոսրովի անտառ», Արարատ, Կոտայք	Ազատ և Վեդի գետերի ավազաններում, լեռնային չորասեր համակեցությունների, սշակովի բույսերի վայրի ցեղակիցների, արիդային նոսրանտառների, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանություն	23 213.5, որից անտառային՝ 4131
«Շիկահող», Սյունիք	Էնդեմիկ և ռելիկտային բուսատեսակների, խոնավասեր անտառների, հարավային Հայաստանում միայնայստեղ հանդիպող արևելյան հաճարենու և հատապտղային կենու պուրակների, Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանություն	12 137.1, որից անտառային՝ 10 482.5
<u>ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ</u>		
«Սևան», Գեղարքունիք	Սևանա լճի էկոհամակարգի պահպանություն	147 456, որից անտառային՝ 12 076

«Դիլիջան» ներառյալ «Ախնաբադի կենու», Տավուշ	կաղնու և հաճարենու ռե-լիկտային անտառների, հատապտղային կենու եզակի պուրակի, բնական սոճուտների, հանքային աղբյուրների սնման մա-կերեսների, Հայաստանի Կարմիր գրքում գրանց-ված կենդանիների ու բույսերի պահպանություն	33 765, որից անտառային՝ 24 679
«Արևիկ» ներառյալ «Բողաքարի» արգելավայր, Սյունիք	Մեղրիի լեռնաշղթայի լանդշաֆտային ու կենսա-բանական բազմազանու-թյան, բնական և մշակու-թային ժառանգության պահպանություն	34 401.8, որից անտառային՝ 16 615
<u>ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ</u>		
«Արջատիլկենու», Տավուշ	Ռելիկտային արջատիլ-լենու և կենու պուրակների պահպանություն	40, որից անտառային՝ 40
«Գիհու նոսրան-տառային», Գեղարքունիք	Գիհի բազմապտուղ, Գիհի գարշահոտ և Գիհի երկա-րատերև տեսակների գե-րակշռությամբ նոսրան-տառների պահպանություն	3 312, որից անտառային՝ 1 232.6
«Գյուլագարակի», Լոռի	Ռելիկտային սոճու անտառների պահպանություն	2 576, որից անտառային՝ 2 576
«Հերիերի նոս-րանտառային», Վայոց Ձոր	Գիհու ռելիկտային նոսրանտառների պահպանություն	6 139, որից անտառային՝ 4 778.5
«Ջերմուկի անտառային», Վայոց Ձոր	Խոշորատեղ կաղնու լեռնա-յին անտառների և դրանց բնորոշ կենդանական աշ-խարհի պահպանություն	3 865, որից անտառային՝ 1 950.6

«Բանքսի սոճու», Կոտայք	Բանքսի սոճու եզակի պուրակի պահպանություն	4, որից անտառային՝ 4
«Արզական-Մեղրաձորի», Կոտայք	Անտառային հազվագյուտ կենդանիների (գորշարջ, կովկասյան մարեհավ) պահպանություն	13 532, որից անտառային՝ 9 527
«Գետիկի», Տավուշ	Լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր կենդանիների (այծյամ, գորշ արջ, Կովկասյան մարեհավ) պահպանություն	5 728, որից անտառային՝ 197
«Իջևանի», Տավուշ	Անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն	5 908, որից անտառային՝ 4 628.7
«Մարգահովիտի», Լոռի	Խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն	3 368, որից անտառային՝ 2 866.7
«Եղեգնաձորի», Վայոց Ձոր	Անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն	4 200, որից անտառային՝ 3 082.4
«Գորիսի», Սյունիք	Անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն	1 850, որից անտառային՝ 1 223.5
«Գանձաքարի», Տավուշ	Լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր կենդանիների (այծյամ, գորշ արջ, Կովկասյան մարեհավ) պահպանություն	6 813, որից անտառային՝ 5 597

«Մոսու պուրակ», Սյունիք	Մոսի արևելյան տեսակի բնական պուրակի պահպանություն	64.2, որից անտառային՝ 64.2
«Զիկատար», Տավուշ	Անտառային էկոհամա- կարգերի պահպանություն	150, որից անտառային՝ 150
«Խուստուփ», Սյունիք	Անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնա- տափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի պահպանություն	6946.74, որից անտառային՝ 3 731.2
«Ջանգեզուր», Սյունիք	Ջրային ու ցամաքային բնական էկոհամակար- գերի զարգացման բնա- կան ընթացքի ապա- հովում, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության	17368.7, որից անտառային՝ 636.3
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 332838հա, որից անտառային՝ 110 269.2 հա		

Անտառային տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված
բուսատեսակներ (կարգավիճակ CR և EN)

Տեսակի անվանումը (լատիներեն և հայերեն)	Կարգավիճակը ՀՀ Կարմիր գրքում	Մարզ, <i>Անտառտնտեսություն</i>	ԲՀՊՏ
* <i>Lycopodium selago</i> L. Գետնամուշկ	CR	Տավուշ <i>Իջևանի</i>	
<i>Asplenium woronowii</i> Christ Ասպլեն Վորոնովի	EN	Լոռի <i>Գուգարքի, Կապանի</i>	
<i>Polystichum braunii</i> (Spenn.) Fee Բանալոտ Բրաունի	EN	Լոռի, Տավուշ, Գեղարքունիք <i>Տաշիրի, Իջևանի, Ճամբարակի</i>	«Դիլիջան»
* <i>Ophioglossum vulgatum</i> L. Իժալեզու սովորական	CR	Սյունիք, Կոտայք <i>Հրազդանի</i>	«Շիկահող»
* <i>Nectaroscordum tripedale</i> (Trautv.) Grossh. Նեկտարասկորդում եռատնաչափ	EN	Արագածոտն, Վայոց ձոր, Սյունիք <i>Հրազդանի, Վայոց ձորի</i>	«Արևիկ»

* <i>Galanthus alpinus</i> Sosn. Չնձադիկ ալպիական	EN	Տավուշ <i>Արծվաբերդի, Բջևանի, Սևքարի, Նոյեմբերյանի</i>	
* <i>Galanthus lagodechianus</i> Kuth. Չնձադիկ լագոդեխիի	EN	Տավուշ <i>Արծվաբերդի, Բջևանի</i>	
* <i>Sternbergia fischeriana</i> (Herb.) M.Roem. Շտերնբերգիա Ֆիշերի	CR	Տավուշ <i>Կապանի</i>	
<i>Froriepia subpinnata</i> (Ledeb.) Baill. Ֆրոբիպիա փետրավոր	CR	Սյունիք	«Շիկահող»
<i>Opopanax persicus</i> Boiss. Ճավշիր պարսկական	CR	Արագածոտն, Կոտայք <i>Հրազդանի, Արագածոտնի</i>	
<i>Tamamschjaniella rubella</i> (E.Busch) Pimenov & Kljuykov Թամամշյանիելա կարմրավուն	CR	Լոռի <i>Ստեփանավանի</i>	
* <i>Aristolochia iberica</i> Fisch. et C.A.Mey. ex Boiss. Արիստոլոխիա վրացական	EN	Լոռի, Տավուշ <i>Գուգարքի, Նոյեմբերյանի</i>	

* <i>Asphodeline lutea</i> (L.) Rchb. Թաղաղու դեղին	CR	Տավուշ <i>Բջևանի</i>	
<i>Centaurea alexandrii</i> Bordz. Տերեփուկ Ալեքսանդրի	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Centaurea arpensis</i> (Czer.) Wagenitz Տերեփուկ արփայի	EN	Վայոց ձոր, Արարատ <i>Վայոց ձորի</i>	«Խոսրովի անտառ»
<i>Centaurea phaeopappoides</i> Bordz. Տերեփուկ ֆեոպապուսանման	EN	Վայոց ձոր <i>Վայոց ձորի</i>	
<i>Cephalorrhynchus kirpicznikovii</i> Grossh. Գլխակտուց Կիրայիչնիկովի	EN	Վայոց ձոր, Արարատ <i>Վայոց ձորի</i>	
<i>Cousinia gabrieljanae</i> Takht. et Thamanjan Խոզանափուշ Գաբրիելյանի	EN	Սյունիք <i>Կապանի</i>	
<i>Cousinia megrica</i> Takht. Խոզանափուշ մեղրիի	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Echinops tournefortii</i> Trautv. Ոգնազլիսիկ Տուրնեֆորի	EN	Տավուշ, Գեղարքունիք <i>Արծվաբերդի, Բջևանի, Ճամբարակի</i>	
<i>Jurinea praetermissa</i> Galushko & Nemirova Յուրինեսա չնկատված	EN	Լոռի <i>Դսեղի, Գուգարքի, Ստեփանավանի</i>	

<i>Psephellus debedicus</i> (Gabrielian) Gabrielian Պսեֆելլուս դեբեդի	EN	Լոռի, Տավուշ <i>Դսեղի, Բջևանի, Նոյեմբերյանի</i>	«Դիլիջան»
<i>Psephellus zangezuri</i> Sosn. Պսեֆելլուս զանգեզուրի	EN	Սյունիք <i>Գապանի, Սիսիանի</i>	
* <i>Tomanthea daralaghezica</i> (Fomin) Takht. Տոմանթեա դարեղեգիսի	EN	Վայոց ձոր, Արարատ <i>Վայոց ձորի</i>	«Խոսրովի անտառ»
<i>Myosotis propinqua</i> Fisch. et Mey. ex DC. Անմոռուկ ցեղակից	EN	Սյունիք	«Շիկահող», «Արևիկ»
<i>Alyssum hajastanum</i> V. Avet. Վառվրուկ հայաստանյան	EN	Գեղարքունիք <i>Ճամբարակի</i>	«Սևան»
<i>Arabis laxa</i> Sibth. & Smith Արարախոտ փխրուն	CR	Սյունիք	«Շիկահող»
<i>Erysimum lilacinum</i> E. Steinb. Չազախոտ կարմրակապույտ	EN	Սյունիք	«Շիկահող», «Արևիկ»
<i>Erysimum macrostygma</i> Boiss. Չազախոտ խոշորասպի	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Pachyphragma macrophyllum</i> (Hoffm.) N. Busch Պախիֆրագմա խոշորատերև	CR	Տավուշ <i>Դսեղի</i>	
<i>Peltariopsis planisiliqua</i> (Boiss.) N. Busch	EN	Վայոց ձոր, Սյունիք	

Վահանակերպ տափակապատիճակ		<i>Վայոց ձորի, Միսիանի</i>	
* <i>Coronaria coriacea</i> (Moench) Schishk. & Gorschk. Կորոնարիա կաշվեկերպ	EN	Սյունիք	«Շիկահող»
<i>Euonymus velutina</i> Fisch. et C.A.Mey. Իլենի թավջային	CR	Սյունիք	«Շիկահող»
* <i>Colchicum goharae</i> Gabrielian Շնդեղ գոհարի	EN	Տավուշ <i>Իջևանի</i>	
* <i>Colchicum umbrosum</i> Stev. Շնդեղ սավերային	CR	Լոռի, Տավուշ <i>Ջիլիզայի, Նոյեմբերյանի</i>	
<i>Swida iberica</i> (Woronow) Pojark. ex Grossh. Ճապկի վրացական	CR	Սյունիք	«Շիկահող»
* <i>Corylus colurna</i> L. Արջատխլենի	EN	Տավուշ <i>Իջևանի, Սևքարի</i>	
<i>Carex depauperata</i> Curtis ex With. Բոշխ աղքատացած	EN	Տավուշ, Սյունիք <i>Նոյեմբերյանի</i>	«Շիկահող»
<i>Carex pendula</i> Huds. Բոշխ կախված	EN	Սյունիք	«Շիկահող»

<i>Argyrolobium biebersteinii</i> P. W. Ball. Արգիրոլոբիում Բիբերշտեյնի	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»
<i>Astragalus grammocalyx</i> Boiss. et Hohen. Գազ խզմզաբաժակ	CR	Կոտայք, Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Astragalus karjagini</i> Boriss. Գազ Կարյագինի	EN	Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Astragalus kirpicznikovii</i> Grossh. Գազ Կիրպիչնիկովի	EN	Սյունիք <i>Կապանի</i>	
<i>Astragalus prilipkoanus</i> Grossh. Գազ Պրիլիպկոյի	EN	Սյունիք <i>Կապանի</i>	
<i>Astragalus sangezuricus</i> Boriss. Գազ զանգեզուրի	EN	Սյունիք	«Արնիկ»
<i>Lathyrus cassius</i> Boiss. Տափոլոռ կասսիայի	EN	Սյունիք <i>Կապանի, Միսիանի</i>	«Շիկահող»
<i>Lathyrus sylvestris</i> L. Տափոլոռ անտառային	EN	Սյունիք <i>Կապանի</i>	
<i>Onobrychis hajastana</i> Grossh. Կորնգան հայաստանի	EN	Կոտայք, Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Trifolium angustifolium</i> L. Երեքնուկ նեղատերև	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»

<i>Vicia pisiformis</i> L. Վիկլոլոնն անման	CR	Սյունիք <i>Կապանի</i>	
* <i>Castanea sativa</i> Mill. Շագանակենի ցանովի	EN	Տավուշ, Սյունիք <i>Իջևանի</i>	«Շիկահող»
* <i>Corydalis marschalliana</i> Pers. Անձխոտ Մարշալի	EN	Լոռի, Տավուշ <i>Իջևանի, Սևաբրի, Ջիլիզայի, Նոյեմբերյանի, Արծվաբերդի</i>	
* <i>Geranium albanum</i> M. Bieb. Խորդենի արևելակովկասյան	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»
<i>Ribes armenum</i> Pojark. Հաղարջենի հայկական	EN	Վայոց ձոր, Շիրակ <i>Վայոց ձորի, Գյումրիի</i>	
* <i>Muscari pallens</i> (M.Bieb.) Fisch. Պապլոր դժգույն	EN	Տավուշ, Գեղարքունիք <i>Իջևանի, Ճամբարակի</i>	
<i>Ornithogalum gabrielianae</i> Agapova Աստղաշուշան Գաբրիելյանի	CR	Արագածոտն <i>Արագածոտնի</i>	
* <i>Scilla mischtschenkoana</i> Grossh. Մկնասոխ Միշչենկոյի	EN	Սյունիք	«Արևիկ»

<i>Gladiolus hajastanicus</i> Gabrielian Թրաշուշան հայաստանյան	EN	Գեղարքունիք, Արագածոտն, Վայոց ձոր, Սյունիք <i>Արագածոտնի, Վայոց ձորի, Ճամբարակի, Սիսիանի</i>	
<i>Gladiolus szovitsii</i> Grossh. Թրաշուշան Շովիցի	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Iris atropatana</i> Grossh. Հիրիկ ատրպատականյան	EN	Վայոց ձոր <i>Վայոց ձորի</i>	
* <i>Iris grossheimii</i> Woronow ex Grossh. Հիրիկ Գրոսհեյմի	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Iris pseudocaucasica</i> Grossh. Հիրիկ կեղծ կովկասյան	EN	Վայոց ձոր, Սյունիք <i>Վայոց ձորի, Սյունիքի</i>	«Արևիկ»
* <i>Dracocephalum austriacum</i> L. Վիշապագլուխ ավստրիական	EN	Գեղարքունիք, Շիրակ <i>Գյումրիի</i>	«Սևան»
* <i>Fritillaria collina</i> Adam Արքայածաղիկ բլրակային	EN	Լոռի, Շիրակ, Կոտայք, Գեղարքունիք, Տավուշ <i>Գուգարքի, Տաշիրի, Ստեփանավանի, Լավարի, Իջևանի, Գյումրիի</i>	«Դիլիջան»

<i>Gagea lutea</i> (L.) Ker Gawl. Սագասոխուկ դեղին	EN	Լոռի, Տավուշ, Վայոց ձոր <i>Գուգարքի, Նոյեմբերյանի, Վայոց ձորի</i>	
* <i>Tulipa confusa</i> Gabrielian Վարդակակաչ խճճված	EN	Սյունիք <i>Գապանի</i>	«Արևիկ», «Շիկահող»
* <i>Tulipa florenskyi</i> Woronow Վարդակակաչ Ֆլորենսկու	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Tulipa sosnovskyi</i> Achverdov & Mirzoeva Վարդակակաչ Սոսնովսկու	EN	Սյունիք <i>Գապանի, Սյունիքի, Սիսիանի</i>	«Արևիկ», «Շիկահող»
* <i>Tulipa sylvestris</i> L. Վարդակակաչ անտառային	CR	Տավուշ <i>Արծվաբերդի</i>	
<i>Corallorhiza trifida</i> Châtel. Կորալորիզ զեռաբաժան	CR	Լոռի, Կոտայք <i>Գուգարքի, Հրազդանի</i>	
* <i>Epipogium aphyllum</i> Sw. Էպիպոգիում անտերև	EN	Լոռի, Տավուշ <i>Ստեփանավանի</i>	«Դիլիջան»
* <i>Listera ovata</i> (L.) R.Br. Երկտերևի ձվաձև	CR	Տավուշ <i>Իջևանի</i>	
* <i>Orchis stevenii</i> Rchb. f. Խոլորձ Ստևենի	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Orchis tridentata</i> Scop. Խոլորձ եռատամ	EN	Սյունիք	«Շիկահող»

* <i>Stevaniella satyrioides</i> (Spreng.) Schult. Ստեննիելա սատիրանման	EN	Տավուշ, Սյունիք <i>Իջևանի, Սյունիքի</i>	«Շիկահող»
* <i>Platanus orientalis</i> L. Սոսի արևելյան	EN	Սյունիք <i>Սյունիքի</i>	«Շիկահող»
<i>Aira elegantissima</i> Schur Գնկոր նրբագեղ	EN	Տավուշ, Սյունիք <i>Նոյեմբերյանի</i>	«Արևիկ»
<i>Elymus transhyrcanus</i> (Nevski) Tzvelev Տիիկ անդրկասպիական	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Արևիկ»
<i>Polygala urartu</i> Tamamsch. Կաթնախոտ ուրարտական	EN	Արագածոտն, Կոտայք <i>Հրազդանի, Արագածոտնի</i>	
* <i>Primula vulgaris subsp. komarovii</i> (Losinsk.) Soo Գնարբուկ Կոմարովի	EN	Սյունիք	«Շիկահող»
* <i>Primula vulgaris subsp. woronowii</i> (Losinsk.) Soo Գնարբուկ Վորոնովի	EN	Սյունիք	«Շիկահող»
<i>Orthilia secunda</i> (L.) House Օրտիլիա փոքր	EN	Լոռի <i>Գուգարքի</i>	
* <i>Anemone ranunculoides</i> L. Վարդակակաչ գորտնուկային	EN	Լոռի, Տավուշ <i>Արծվաբերդի, Սևքարի, Գուգարքի</i>	«Դիլիջան»

<i>Clematis vitalba</i> L. Հոտոտ խաղողատերև	EN	Տավուշ <i>Նոյեմբերյանի, Սևքարի</i>	
<i>Ranunculus cicutarius</i> Schlecht. Գորտնուկ ցիկուտային	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»
<i>Ranunculus villosus</i> DC. Գորտնուկ մազոտ	CR	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»
<i>Amygdalus nairica</i> Fed. et Takht. Նշենի նաիրյան	EN	Սյունիք <i>Սյունիքի, Միսիանի</i>	«Արևիկ»
<i>Crataegus microphylla</i> K.Koch Սգնի, ալոճ փոքրատերև	EN	Լոռի, Տավուշ, Սյունիք <i>Նոյեմբերյանի, Սևքարի, Սյունիքի</i>	«Շիկահող»
<i>Crataegus szovitsii</i> Pojark. Սգնի, ալոճ Շովիցի	CR	Վայոց ձոր <i>Վայոց ձորի</i>	
<i>Crataegus ulotricha</i> Pojark. Սգնի, ալոճ գանգրամազիկավոր	CR	Սյունիք <i>Սյունիքի, Միսիանի</i>	
<i>Crataegus zangezura</i> Pojark. Սգնի, ալոճ գանգեզուրյան	EN	Սյունիք <i>Կապանի, Միսիանի</i>	«Շիկահող»
<i>Pyrus browiczii</i> Mulk. Տանձենի Բոովիցի	CR	Վայոց ձոր <i>Վայոց ձորի</i>	

<i>Pyrus complexa</i> Rubtzov Տանձենի խառնված	EN	Վայոց ձոր, Արարատ, Սյունիք <i>Վայոց ձորի</i>	«Խոսրովի անտառ», «Արևիկ»
<i>Pyrus daralagezi</i> Mulk. Տանձենի դարեղեգիսի	EN	Վայոց ձոր, Սյունիք <i>Վայոց ձորի</i>	«Արևիկ»
<i>Pyrus elata</i> Rubtzov Տանձենի բարձր	EN	Վայոց ձոր, Սյունիք <i>Վայոց ձորի</i>	«Արևիկ»
<i>Pyrus gergerana</i> Gladkova Տանձենի հերիերի	EN	Վայոց ձոր, Սյունիք <i>Վայոց ձորի</i>	«Արևիկ», «Շիկահող»
<i>Pyrus grossheimii</i> Fed. Տանձենի Գրոսհեյմի	EN	Սյունիք <i>Միսիանի</i>	«Արևիկ»
<i>Pyrus hircana</i> Fed. Տանձենի հիրկանյան	EN	Սյունիք <i>Կապանի</i>	«Շիկահող»
<i>Pyrus raddeana</i> Woronow Տանձենի Ռադդեի	EN	Սյունիք	«Արևիկ», «Շիկահող»
<i>Pyrus theodorovi</i> Mulk. Տանձենի Ֆյոդորովի	EN	Կոտայք, Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Pyrus voronovii</i> Rubtzov Տանձենի Վորոնովի	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Rubus takhtadjanii</i> Mulk. Մորենի, մոշենի Թախտաջյանի	EN	Սյունիք	«Շիկահող»

<i>Rubus zangezurus</i> Mulk. Մորենի, մոշենի զանգեզուրի	EN	Տավուշ, Սյունիք <i>Արծվաբերդի, Սիսիանի</i>	«Շիկահող»
<i>Sorbus caucasica</i> Zinserl. Արոսենի կովկասյան	EN	Վայոց ձոր <i>Վայոց ձորի</i>	
<i>Asperula taurina</i> L. subsp. <i>caucasica</i> (Woronow ex Pobed.) Ehrend. Գետնաստղ կովկասյան	EN	Տավուշ <i>Իջևանի</i>	
<i>Thesium procumbens</i> C.A.Mey. Թեզիում փոված	EN	Լոռի, Տավուշ <i>Գուլարքի</i>	«Դիլիջան»
<i>Linaria megrica</i> Tzvelev Կտավախոտ մեղրու	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Verbascum formosum</i> Fisch. ex Schrank Խոնդատ հիանալի	EN	Տավուշ <i>Արծվաբերդի, Նոյեմբերյանի</i>	
<i>Verbascum gossypium</i> M. Bieb. Խոնդատ բամբակային	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Verbascum megricum</i> (Tzvelev) Hub.-Mor. Խոնդատ մեղրու	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Smilax excelsa</i> L. Պարիլյակ բարձր	EN	Լոռի, Տավուշ <i>Իջևանի, Դսեղի, Զիլիզայի, Նոյեմբերյանի</i>	

*«Գերակա» (առավել հրապուրիչ և աչքի ընկնող) բուսատեսակներ

Անտառային տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում
 ընդգրկված կենդանատեսակներ
 (կարգավիճակ CR և EN)

Տեսակի անվանումը (լատիներեն և հայերեն)	Կարգավիճակը ՀՀ Կարմիր գրքում	Մարզ, Անտառանտեսություն	ԲՀՊՏ
Անողնաշար կենդանիներ – <i>Invertebrata</i>			
Փափկամարմիններ-Փորոտանիներ – <i>Mollusca-Gastropoda</i>			
* <i>Columella columella</i> Սյունաձև խխունջ	CR	Սյունիք	«Ջանգեղուկ»
<i>Vertigo angustior</i> Նեղ խխունջ	CR	Լոռի <i>Ստեփանավանի</i>	
* <i>Euxina akramowskii</i> Ակրամովսկու խխունջ	CR	Սյունիք <i>Կապանի</i>	
Հողվածոտանիներ-Միջատներ – <i>Arthropoda-Insecta</i>			
* <i>Coenagrion armatum</i> Նետիկ զինված	CR	Շիրակ	«Արփի լիճ»
* <i>Aeshna cyanea</i> Կապույտ ձպուռ	EN	Տավուշ	«Դիլիջան»
* <i>Aeshna serrata</i> Մրոցակիր ձպուռ	EN	Շիրակ	«Արփի լիճ»
* <i>Leucorrhinia pectoralis</i> Ճահճային ձպուռ	CR	Լոռի <i>Ստեփանավանի</i>	
<i>Sympetrum</i>	EN	Սյունիք	

<i>depressiusculum</i> Տափակ ճպուռ		Կապանի	
<i>Poecilimon geoktshaicus</i> Մոզգապոչ անդրկովկասյան	EN	Տավուշ Նոյեմբերյանի	
<i>Bicolorana roeseli</i> Ռյոզելի երկգույն ծղրիդ	CR	Կոտայք Հրազդանի	
<i>Duvalius stepanavanensis</i> Ստեփանավանյան առվակային գնայուկ	CR	Լոռի Ստեփանավանի	
<i>Duvalius yatsenkokhmelevskii</i> Յացենկո- Խմելևսկու առվակային գնայուկ	CR	Տավուշ Իջևանի	
<i>Aeoloides figuratus</i> Զարդավոր չրխկան	CR	Տավուշ Իջևանի, Արծվաբերդի	
* <i>Cardiophorus somcheticus</i> Սոմխետական չրխկան	CR	Տավուշ Իջևանի	
<i>Acmaeoderella pellitula</i> Մորթիավոր ոսկերբեզ	EN	Սյունիք, Արարատ	«Արևիկ», «Խոսրովի անտառ»
<i>Anthaxia breviformis</i> Կարճամարմին ոսկերբեզ	CR	Սյունիք	«Արևիկ»
<i>Anthaxia superba</i> Հպարտ ոսկերբեզ	CR	Սյունիք	«Արևիկ»

* <i>Sphaerobothris aghababiani</i> Աղաբաբյանի նսկեբզեզ	CR	Սյունիք	«Արևիկ»
<i>Sphenoptera geghardica</i> Գեղարդյան նսկեբզեզ	EN	Կոտայք, Արարատ	«Խոսրովի անտառ»
* <i>Mylabris sedilithorax</i> Թամբակուրծ թարախահան	EN	Կոտայք, Արագածոտն <i>Արագածոտնի</i>	«Հանքավան»
<i>Isomira armena</i> Հայկական ծաղկեփոշեկեր	EN	Տավուշ <i>Իջևանի</i>	«Դիլիջան»
* <i>Armenohelops armeniacus</i> Հայկական սևամարմին	EN	Կոտայք, Արագածոտն, Արարատ <i>Արագածոտնի</i>	«Խոսրովի անտառ»
<i>Cylindronotus erivanus</i> Երևանյան սևամարմին	EN	Կոտայք, Արագածոտն <i>Արագածոտնի,</i> <i>Հրազդանի</i>	«Հանքավան»
* <i>Entomogonus amandanus</i> Սևամարմին աքսոքված	EN	Սյունիք	«Արևիկ»
* <i>Cortodera kaphanica</i> Կապանյան երկարաբեղիկ	EN	Սյունիք	«Շիկահող», «Զանգեզուր»
* <i>Rosalia alpina</i> Ալպյան ոռզալիա	EN	Տավուշ, Սյունիք <i>Իջևանի</i>	«Դիլիջան», «Շիկահող»
* <i>Asias aghababiani</i> Աղաբաբյանի երկարաբեղիկ	CR	Սյունիք	«Արևիկ»
<i>Phytoecia pici</i> Պիկի երկարաբեղիկ	EN	Վայոց ձոր, Արարատ	«Խոսրովի անտառ»

<i>Agapanthia korostelevi</i> Կոռոստեյլովի երկարաբեղիկ	EN	Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Melitaea vedica</i> Վեդիակյան սելիթեա	EN	Կոտայք, Արարատ	«Խոսրովի անտառ»
* <i>Agrodiaetus damonides</i> Դամոնիդես կապտաթիթեռ	CR	Սյունիք	«Արևիկ»
<i>Agrodiaetus erivanensis</i> Երևանայան կապտաթիթեռ	EN	Վայոց ձոր, Արարատ, Արագածոտն <i>Արագածոտնի</i>	«Խոսրովի անտառ»
<i>Agrodiaetus huberti</i> Հուբերտի կապտաթիթեռ	EN	Արարատ, Սյունիք	«Խոսրովի անտառ», «Զանգեզուր»
<i>Agrodiaetus iphigenia</i> Իֆիգենիա կապտաթիթեռ	EN	Վայոց ձոր, Սյունիք <i>Միսիանի</i>	
* <i>Agrodiaetus neglectus</i> Անտեսված կապտաթիթեռ	EN	Սյունիք	«Արևիկ»
<i>Agrodiaetus ninae</i> Նինայի կապտաթիթեռ	EN	Գեղարքունիք, Արարատ	«Խոսրովի անտառ», «Սևան»
<i>Agrodiaetus surakovi</i> Սուռակովի կապտաթիթեռ	EN	Արարատ	«Խոսրովի անտառ»
<i>Cidaria avetianae</i> Ավետյանի երկրաչափ թիթեռ	EN	Արարատ, Տավուշ, Սյունիք	«Խոսրովի անտառ», «Արևիկ»
<i>Eupithecia alexandriana</i> Ալեքսանդրի երկրաչափ թիթեռ	EN	Կոտայք <i>Հրազդանի</i>	

<i>Archianthidium pubescens</i> Մազոտմեղու	CR	Արագածոտն <i>Արագածոտնի</i>	
<i>Myrmica ruginodis</i> Ռավազինիի մրջյուն	EN	Կոտայք	
<i>Diplorhoptum juliae</i> Ջուլիայի մրջյուն	CR	Կոտայք	
<i>Tetramorium levigatum</i> Հարթ մրջյուն	CR	Սյունիք	«Արևիկ»
Ողնաշարավոր կենդանիներ – Vertebrata			
Երկկենցաղներ - Amphibia			
* <i>Ommatotriton ophryticus</i> Փոքրասիական տրիտոն	CR	Լոռի, Տավուշ <i>Դսեղի, Լավարի, Ստեփանավանի, Զիլիզայի, Տաշիրի</i>	«Դիլիջան» (ներմուծված)
Սողուններ - Reptilia			
* <i>Parvilacerta parva</i> Փոքրասիական մողես	CR	Տավուշ <i>Արծվաբերդի</i>	
* <i>Darevskia dahli</i> Դալի մողես	EN	Շիրակ, Լոռի, Տավուշ <i>Իջևանի, Սևաբրի, Գուգարքի, Լավարի</i>	«Դիլիջան»
* <i>Darevskia rostrombekovi</i> Ռոստոմբեկովի մողես	EN	Լոռի, Տավուշ, Գեղարքունիք <i>Իջևանի, Սևաբրի, Գուգարքի, Լավարի, Նոյեմբերյանի, Արծվաբերդի</i>	«Դիլիջան», «Սևան»

Թռչուններ – Aves			
<i>*Aegipus monachus</i> Սև անգղ	EN	Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	«Խոսրովի անտառ», «Արևիկ»
<i>*Pyrrhonorax graculus</i> Ալպիական ճայ	EN	Սյունիք	«Արևիկ», «Զանգեզուր»
Կաթնասուններ – Mammalia			
<i>*Neomys schelkovnikovi</i> Շելկովնիկովի Կուտորա	EN	Լոռի, Տավուշ, Արագածոտն, Գեղարքունիք, Վայոց ձոր, Սյունիք	«Շիկահող», «Դիլիջան», «Արևիկ»
<i>*Sicista armenica</i> Հայկական մկնիկ	CR	Լոռի, Տավուշ, Կոտայք, Սյունիք <i>Գուգարքի</i>	«Հանքավան»
<i>*Panthera pardus</i> Ընձառյուծ	CR	Արարատ, Սյունիք	«Խոսրովի անտառ», «Արևիկ», «Շիկահող», «Զանգեզուր»
<i>*Capra aegagrus</i> <i>Erleben</i> Բեզուարյան այծ	VU	Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	«Արևիկ», «Զանգեզուր»
<i>*Cervus elaphus maral</i> Կովկասյան ագնվացեղ եղջերու կամ մարալ	CR	Տավուշ, Վայոց ձոր, Սյունիք (հավանաբար անհետացած)	«Արևիկ», «Շիկահող», «Դիլիջան» (հավանա- բար անհե- տացած)

*«Գերակա» (առավել հրապուրիչ և աչքի ընկնող) տեսակներ

**Անտառային էկոհամակարգերի հետ կապված «Էմերալդ»
էկոլոգիական ցանցի տարածքները (սայթերը) Հայաստանում
(Բեռնի կոնվենցիայի շրջանակներում)**

1. «Խոսրովի անտառ» (AM0000001): Սայթը ընդգրկում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը և դրա շրջակա տարածքները, որտեղ կարևորվում են կաղնուտները և գիհու նոսրանտառները: Սայթից հայտնի են Բեռնի կոնվենցիայի 6-րդ Բանաձի հավելվածներում (ԲԿՀ) գրանցված 44 բուսա- և կենդատեսակներ, որոնցից մոտ 35-ը կապված են այստեղ ներկայացված անտառային էկոհամակարգերի հետ:

2. «Սևանա լճի ավազան» (AM0000002): Սայթը ընդգրկում է Սևանա լճի ողջ ավազանը: Կարևորագույն հատվածներն են լճի Արեգունու ափի կիրճերի կաղնու մնացորդային անտառները, Արդանիշ թերակղզու խառը անտառները, ինչպես նաև այս նույն վայրերի գիհու նոսրանտառները: Մերձափնյա արհեստական անտառածածկ տարածքներում առկա է յուրահատուկ ֆաունա: Ընհանուր առմամբ սայթում հայտնաբերված ԲԿՀ գրանցված 81 տեսակից մոտ 45 բուսա- և կենդանատեսակներ կապված են անտառային էկոհամակարգերի հետ:

3. «Իջևան» (AM0000005): Սայթը ընդգրկում է «Իջևան» և «Արջատիլենու» պետական արգելավայրերի տարածքները՝ հարակից անտառային տարածքների հետ միասին: Այստեղ կարևորագույն էկոհամարգերն են հաճարենու և կաղնու անտառները, ինչպես նաև արջատիլենու գերակշռությամբ ծառուտի հատվածը: Սայթի անտառների հետ կապված են ԲԿՀ-ի 32 բուսա- և կենդանատեսակներ, ինչպես նաև ազգային նշանակություն ունեցող 7 տեսակ:

4. «Շիրյակ Կապանի մոտակայքում» (AM0000008): Ոչ մեծ սայթ է (մոտ 50 հա), որն առանձնացվել է Հայաստանում նեղատերև քաջվարդի միակ պոպուլյացիայի պահպանման համար: Սայթի տարածքում շիրյակի վրա աճում է քաջվարդը, առկա են նաև կաղնու անտառները: Սայթից հայտնի են ԲԿՀ 23 բուսա- և կենդանատեսակներ, կապված այստեղ առկա տարբեր տիպի անտառային էկոհամակարգերի հետ: Բացի այդ, այս էկոհամակարգերի հետ կապված են ազգային նշանակություն ունեցող 10 տեսակ:

5. «Ջերմուկ» (AM0000009): Սայթը ընդգրկում է «Ջերմուկ» նախագծվող ազգային պարկի տարածքը: Կարևորագույն էկոհամակարգերն են կաղնու անտառները և տանձենու ու գլխու նոսրանտառները:

6. «Դիլիջան» (AM0000011): Սայթը ընդգրկում է «Դիլիջան» ազգային պարկի ողջ տարածքը: Կարևորագույն էկոհամակարգերն են կաղնու և հաճարենու անտառները, սոճու անտառների հատվածները, հատապտղային կենու տարածքները և խառը անտառները: Սայթից հայտնի են ԲԿՀ 57 բուսա- և կենդանատեսակներ, ինչպես նաև ազգային նշանակություն ունեցող 10 տեսակ:

7. «Գնիշիկ» (AM0000012): Սայթը ընդգրկում է «Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ» ԲՀՊՏ-ի ողջ տարածքը: Այս տարածքում ներկայացված են կաղնու անտառների ոչ մեծ հատվածներ և գլխու նոսրանտառներ, ինչպես նաև ծառաթփային բուսականության հատվածներ: Սայթից հայտնի են ԲԿՀ 53 բուսա- և կենդանատեսակներ, որոնցից մոտ 40-ը այս կամ այն կերպ կապված են այստեղ ներկայացված անտառային էկոհամակարգերի հետ: Բացի այդ, անտառների հետ կապված են ազգային նշանակություն ունեցող 4 տեսակ:

8. «Արևիկ» (AM0000014): Սայթը ընդգրկում է «Արևիկ» ազգային պարկի ողջ տարածքը՝ հարակից տա-

քաճքներով մինչև Արաքս գետի հուն: Կարևորագույն էկոհամակարգերն են կաղնու անտառները, լայնատերև և գիհու նոսրանտառները, Եփրատյան բարդու գերակշռությամբ մերձափնյա հատվածները՝ Արաքսի և Մեղրիգետի կիրճերում: Սայթից հայտնի են ԲԿՀ 61 բուսա- և կենդանատեսակներ, որոնցից մոտ 55-ը կապված են այստեղ ներկայացված անտառային էկոհամակարգերի հետ: Բացի այդ, անտառների հետ կապված են ազգային նշանակություն ունեցող 12 տեսակ:

9. «Զանգեզուր» (AM0000015): Ծավալուն սայթ է, որի կազմի մեջ ներառված են «Շիկահողի» արգելոցը, «Մոսու պուրակ», «Խուստուփ» և «Զանգեզուր» արգելավայրերը: Կարևորագույն էկոհամակարգերն են կաղնու անտառները, Կովկասում միակ սոսու պուրակը և գիհու նոսրանտառները:

10. «Տաթև» (AM0000016): Սայթը ընդգրկում է նախագծվող ազգային պարկի տարածքը: Կարևորագույն էկոհամակարգերն են կաղնու անտառները և տանձենու տարբեր տեսակների գերակշռությամբ անտառային տարածքները:

11. «Խնձորեսկ» (AM0000018): Սայթը առանձնացվել է մի քանի տեսակ չղջիկների պոպուլյացիաների պահպանման նպատակով, սակայն այստեղ ներկայացված են նաև կաղնու անտառների ոչ մեծ հատվածներ:

12. «Լաստիվեր» (AM0000020): Սայթը առանձնացվել է, առաջին հերթին, մի քանի տեսակ չղջիկների պոպուլյացիաների պահպանման նպատակով, սակայն այստեղ լավ են ներկայացված հաճարենու և կաղնու անտառները:

Հայաստանի անտառներում հանդիպող Բոննի կոնվենցիայի
հավելվածում ներառված տեսակները

Տեսակի անվանումը (լատիներեն և հայերեն)		Կարգավիճակը ՀՀ Կարմիր վեճակով ցուցում
Թռչուններ – Aves		
<i>Botaurus stellaris</i>	Մեծ ջրցուլ	
<i>Ixobrychus minutus</i>	Փոքր ջրցուլ	
<i>Ciconia nigra</i>	Սև արագիլ	VU
<i>Anas clypeata</i>	Լայնակտուց բադ	VU
<i>Anas platyrhynchos</i>	Կոնչան բադ	
<i>Gypaetus barbatus</i>	Գառնանգղ (մորուքավոր անգղ)	VU
<i>Gyps fulvus</i>	Սպիտակագլուխ անգղ	VU
<i>Aegipus monachus</i>	Սև անգղ	EN
<i>Circus gallicus</i>	Օձակեր արծիվ	VU
<i>Buteo buteo</i>	Մեծ ճուռակ	
<i>Pernis apivorus</i>	Կրետակեր	
<i>Milvus migrans</i>	Սև ցին	
<i>Pandion haliaetus</i>	Ջրարծիվ	
<i>Accipiter brevipes</i>	Եվրոպական ճնճղաճուռակ	VU
<i>Accipiter gentilis</i>	Ցախաքլորավորս	VU
<i>Accipiter nisus</i>	Լերաճուռակ	
<i>Heliaetus albicilla</i>	Սպիտակապոչ արծիվ	VU

<i>Aquila pomarina</i>	Փոքր ենթարծիվ	VU
<i>Aquila heliaca</i>	Բլրային արծիվ	VU
<i>Aquila chrysaetos</i>	Քարարծիվ	VU
<i>Hieraetus pennatus</i>	Գաճաճ արծիվ	VU
<i>Falco vespertinus</i>	Կարմրաոտ բազե	VU
<i>Falco columbarius</i>	Աղավնաբազե	DD
<i>Falco peregrinus</i>	Սապսան	VU
<i>Streptopelia turtur</i>	Տատրակ	
<i>Tetrao mlokosiewiczi</i>	Կովկասյան մարեհավ	VU
<i>Phasianus colchicus</i>	Անդրկովկասյան փասիան	DD
<i>Scolopax rusticola</i>	Անտառակտցար	
<i>Bubo bubo</i>	Բվեճ	VU
<i>Aegolius funereus</i>	Թավջառտբու	VU
<i>Dryocopus martius</i>	Սև փայտփոր	VU
<i>Lanius senator</i>	Կարմրակատար շամփրուկ	VU
<i>Irania gutturalis</i>	Սպիտակափողտխակ	DD
<i>Muscicapa striata</i>	Մոխրագույն ճանճորս	
<i>Ficedula hypoleuca</i>	Խայտաբդետ ճանճորս	
<i>Ficedula albicollis</i>	Սպիտակավիզ ճանճորս	
<i>Ficedula parva</i>	Փոքր ճանճորս	
<i>Ficedula semitorquata</i>	Կիսասպիտակավիզ ճանճորս	DD
<i>Parus lugubris</i>	Միջերկրածովային երաշտահավ	VU
<i>Sitta tephronota</i>	Մեծ ժայռային սիտեղ	VU
<i>Emberiza buchanani</i>	Ժայռային դրախտապան	VU
<i>Loxia curvirostra</i>	Խաչկտուց	DD

<i>Passer hispaniolensis</i>	Իսպանական ճնճղուկ	VU
<i>Pyrhacorax graculus</i>	Ալպիական ճայ	EN
Կաթնասուններ – Mammalia		
<i>Rhinolophus euryale</i>	Հարավային պայտաքիթ	VU
<i>Rhinolophus mehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	VU
<i>Rhinolophus hipposideros</i>	Փոքր պայտաքիթ	
<i>Rhinolophus blasii</i>	Բլազիի միջերկրածովային պայտաքիթ	
<i>Rhinolophus ferrumequinum</i>	Մեծ պայտաքիթ	
<i>Miniopterus schreibersi</i>	Սովորական երկարաթև չղջիկ	VU
<i>Myotis bechsteinii</i>	Բեխշտեյնի գիշերաչղջիկ	VU
<i>Myotis blythii</i>	Սրականջ կամ Բլիթի գիշերաչղջիկ	
<i>Myotis schaubi</i>	Արաքսյան գիշերաչղջիկ	
<i>Myotis emarginatus</i>	Եռագույն գիշերաչղջիկ	
<i>Myotis mystacinus</i>	Բեղավոր գիշերաչղջիկ	
<i>Myotis nattereri</i>	Նատերերի գիշերաչղջիկ	
<i>Barbastella leucomelas</i>	Ասիական լայնականջ չղջիկ	VU
<i>Myotis mystacinus</i>	Եվրոպական լայնականջ չղջիկ	
<i>Plecotus auritus</i>	Գորշ ականջեղ	VU
<i>Plecotus austriacus</i>	Մոխրագույն կամ	

	ավստրիական ականջեղ	
<i>Nyctalus noctula</i>	Շեկ իրիկնաչղջիկ	
<i>Nyctalus leisleri</i>	Փոքր իրիկնաչղջիկ	
<i>Pipistrellus kuhlii</i>	Միջերկրածովային փոքրաչղջիկ	
<i>Pipistrellus pipistrellus</i>	Թզուկ փոքրաչղջիկ	
<i>Pipistrellus pygmaeus</i>	Գաջաճ փոքրաչղջիկ	
<i>Pipistrellus nathusii</i>	Նատուզիուսի կամ անտառային փոքրաչղջիկ	
<i>Hypsugo savii</i>	Մաշկեղանման փոքրաչղջիկ	
<i>Vespertilio murinus</i>	Երկգույն մաշկեղ	
<i>Eptesicus serotinus</i>	Ուշաթռիչք մաշկեղ	
<i>Eptesicus bottae</i>	Անապատային մաշկեղ	
<i>Tadarida teniotis</i>	Ծալքաշուրթ լայնականջ չղջիկ	DD

Անտառային էկոհամակարգերի հետ կապված Հայաստանի կարևորագույն բուսաբանական տարածքներ (ԿԲՏ)

1. «**Բագրատաշեն-Նոյեմբերյան**»՝ տարածքն ընդգրկում է կաղնու և հաճարենու անտառների տարբեր տիպեր:

2. «**Իջևան**» (ներառյալ արջատիլենու (*Corylus colurna*) արգելավայրը)՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն սայթի հետ:

3. «**Մեղրաձոր-Մարգահովիտ**»՝ տարածքն ընդգրկում է կաղնու անտառներ և մրտավարդի համակեցություններ (*Rhododendron caucasicum*-ի գերակշռությամբ)

4. «**Դիլիջան**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն սայթի հետ:

5. «**Արդանիշ թերակղզի**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Սևան սայթի համանուն հատվածի հետ:

6. «**Սևանի նոսրանտառներ**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Սևան սայթի համանուն հատվածի հետ:

7. «**Խոսրովի անտառ**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն սայթի հետ:

8. «**Եղեգիս**»՝ տարածքը ներառում է խոշորառեզ կաղնու (*Quercus macranthera*) անտառներ և տանձենու (*Pyrus*) տարբեր տեսակների նոսրանտառներ:

9. «**Ջերմուկ**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն սայթի հետ:

10. «**Գնիշիկ**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն սայթի հետ:

11. «**Գորիս-Խնձորեսկ**» տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի համանուն 2 սայթերի հետ:

12. «**Մեղրի**»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Արևիկ սայթի համանուն հատվածի հետ:

13. «Շիկահող-Խուստուփ»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Ջանգեզուր սայթի համանուն հատվածի հետ:

14. «Մեղրի-Նոնաձոր»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Արևիկ սայթի համանուն հատվածի հետ:

15. «Ամասիայի դողդոջուն կաղամախու պուրակներ»՝ տարածքն ընդգրկում է *Populus tremula*-ի փոքր պուրակներ Ամասիայի շրջակայքում և «Արփի լիճ» ազգային պարկում:

16. «Սոսու պուրակ»՝ տարածքը համընկնում է Էմերալդ ցանցի Ջանգեզուր սայթի համանուն հատվածի հետ:

17. «Գյուլագարակի սոճու անտառ»՝ տարածքը ներառում է *Pinus kochiana*-ի գերակշռությամբ Հայաստանում շատ հազվագյուտ անտառային էկոհամակարգեր:

18. «Արայի լեռ»՝ տարածքը ընդգրկում է Արայի լեռան խոշորառեջ կաղնու (*Quercus macranthera*) անտառները:

Հայաստանի կարևորագույն թռչնաբանական տարածքներ (ԿԹՏ), որոնք ընդգրկում են անտառային էկոհամակարգեր

1. **«Արփի լիճ»** (AM001) և **«Ամասիա»** (AM006) ԿԹՏ-ները գտնվում են Շիրակի մարզի հյուսիսարևմտյան հատվածում՝ Արփի լճի շրջակայքում, «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում: Տարածքները հիմնականում զբաղեցնում են ջրաճահճային և լեռնատափաստանային լանդշաֆտներ, որտեղ ներկայացված են նաև թռչնաբանական տեսակետից առանձնակի նշանակություն չունեցող մերձափնյա ծառաթփային բուսականության փոքր հատվածներ:

2. **«Փամբակ»** ԿԹՏ-ն (AM002) գտնվում է Փամբակի լեռնաշղթայի արևմտյան մասում՝ Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմաններում: Տարածքի հարավում և հյուսիսում աճող անտառային տեղամասերում հանդիպում են 6 տեսակի թռչուններ:

3. **«Խոսրովի անտառ արգելոց»** ԿԹՏ-ն (AM003) համընկնում է «Խոսրովի անտառ» արգելոցի հետ: Տարածքից հայտնի են անտառային էկոհամակարգերի հետ կապված ավելի քան 30 թռչնատեսակներ՝ գրանցված ՀՀ Կարմիր գրքում, իսկ 14-ը հանդիսանում են Birdlife International-ի ցուցանմուշային տեսակ:

4. **«Տաշիր»** ԿԹՏ-ն (AM007) գտնվում է Հյուսիսային Հայաստանում (Լոռու մարզ): Տարածքն ընդրկում է ջրաճահճային, գյուղատնտեսական օգտագործման և անտառային տեղամասեր: Վերջիններիս հետ կապված են Birdlife International-ի ցուցանմուշային տեսակներից 2-ը:

5. «Դևեղ» ԿԹՏ-ն (AM008) գտնվում է Լոռու մարզում՝ ընդգրկելով հիմնականում անտառային և անտառում գտնվող ժայռային լանդշաֆտներ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով օգտագործվող տարածքներ: Տարածքից հայտնի են անտառային էկոհամակարգերի հետ կապված մի շարք թռչնատեսակներ՝ գրանցված ՀՀ Կարմիր գրքում և Birdlife International-ի ցուցանմուշային տեսակների ցանկում:

6. «Հաղարծին» ԿԹՏ-ն (AM009) գտնվում է ՀՀ հյուսիսարևելյան հատվածում (Տավուշի մարզ)՝ «Դիլիջան» ազգային պարկի սահմաններում: Գրեթե ամբողջությամբ ընդգրկում է անտառներ՝ իրենց յուրահատուկ թռչնային ֆաունայով: Թռչունների 16 տեսակ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում, իսկ 6-ը՝ Birdlife International-ի ցուցանմուշային տեսակների ցանկում:

7. «Արաիլեռ» ԿԹՏ-ն (AM010) գտնվում է Կենտրոնական Հայաստանում՝ Արագածոտնի և Կոտայքի մարզերում: ԿԹՏ-ի հիմնականում ներառում է բաց լանդշաֆտներ, սակայն Birdlife International-ի բոլոր 3 ցուցանմուշային տեսակները այս կամ այն չափով կախված են լեռան լանջերին գտնվող նոսրանտառներից:

8. «Գնդասար» ԿԹՏ-ն (AM013) գտնվում է Կենտրոնական Հայաստանում (Արարատի մարզ): Այստեղ հիմնականում ներկայացված են բաց լանդշաֆտներ, իսկ ծառաթփային բուսականության փոքր տարածքներում որոշ սեզոններին հայտնվում է ՀՀ Կարմիր գրքում գրանցված քարաքակավր:

9. «Նորավանքի կիրճ» ԿԹՏ-ն (AM014) գտնվում է Վայոց Ձորի մարզում, Արփա գետի ավազանում: Այն ներառում է բազմազան լանդշաֆտներ՝ կիսաանապատ, լեռնային տափաստան (ժայռային զանգվածներով), գիհու նոսրանտառներ և այլն՝ իրենց յուրահատուկ թռչնաֆաունայով: Այստեղ հանդիպում են ԲՊՄՄ Կարմիր ցուցակում և ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների բազմաթիվ տեսակներ, այդ թվում թռչուններ: Տարածքը հարուստ է նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և էնդեմիկ բուսատեսակներով:

10. «Ջերմուկ» ԿԹՏ-ն (AM015) գտնվում է Կենտրոնական Հայաստանում (Վայոց Ձորի մարզ), Արփա գետի ձորում՝ «Ջերմուկի», «Ջերմուկի ջրաբանական» և «Հերհերի» արգելավայրերի սահմաններում (մասամբ): Տարածքում հիմնականում ներկայացված են գիհու նոսրանտառներն՝ իրենց յուրահատուկ թռչնաֆաունայով: Թռչնատեսակներից 5-ը ընդգրկված են Birdlife International-ի ցուցանմուշային տեսակների ցանկում և գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

11. «Զանգեզուր» ԿԹՏ-ն (AM017) գտնվում է Հարավային Հայաստանում (Սյունիքի մարզ)՝ զբաղեցնելով Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջի մի մասը: Այստեղ հիմնականում ներկայացված են բաց բարձրլեռնային լանդշաֆտները, սակայն կան նաև անտառային էկոհամակարգեր: Տարածքից հայտնի են Birdlife International-ի ցուցանմուշային տեսակներից 5-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում և կապված են անտառների հետ՝ մշտապես կամ սեզոնային կտրվածքով:

12. «Մեղրի» ԿԹՏ-ն (AM018) գտնվում է Մեղրիի տարածաշրջանում (Սյունիքի մարզ)՝ զբաղեցնելով «Արևիկ» ազգային պարկի կենտրոնական մասը և հյուսիսից և հարավից անմիջականորեն հարող տեղամասերը: Տարածքից հայտնի են անտառային էկոհամակարգերի հետ կապված ՀՀ Կարմիր գրքում գրանցված մոտ 25 տեսակ, որոնցից 17-ը Birdlife International-ի ցուցանմուշային տեսակներ են:

Հայաստանի հազվագյուտ անտառային բնակմիջավայրերը¹

Իրանա-անատոլիական խառը մերձափնյա անտառներ: Իրանա-անատոլիական սարահարթի, Կուրի ավազանի և Հիրկանյան հարթավայրի, Հինդուկուշի և Արևմտյան Հիմալայների *Populus nigra*, *P. caspica*, *P. alba*, *P. euphratica*, *P. pruinosa*, *P. transcaucasica*, *Juglans regia*, *Platanus orientalis* տեսակներով մերձգետային անտառներ: Նման էկոհամակարգերում մեծ դեր են խաղում *Populus* ցեղի ներկայացուցիչների հետ կապված օլիգոտրոֆ տերևակեր և, հատկապես, բնափայտում զարգացող միջատները: Սրանցից են, օրինակ՝ *Capnodis*, *Trachypteris*, *Agrilus*, *Dicerca* ցեղերի ներկայացուցիչները և խիստ հազվադեպ *Buprestis salomoni* ոսկեբզեզները, Անդրկովկասի էնդեմիկ երկարաբեղիկներ *Rhamnusium bicolor testaceipenne* և *R. b. Lenkoranus*-ը և այլն: Հազվագյուտ բնակմիջավայրեր են, որոնք հիմնականում հանդիպում են Հարավային Զանգեզուրի և Մեղրիի ֆլորիստիկ շրջաններում: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ «Շիկահող» արգելոց, «Արևիկ» ազգային պարկ:

¹ Սովորաբար ողնաշարավոր կենդանիները կապված չեն բուսականության տեսակային կազմի հետ՝ նախընտրելով անտառների ծառածածկը: Միյան եզակի դեպքերում որոշ ողնաշարավորներ նախընտրում են կոնկրետ էկոհամակարգ: Մյուս կողմից, անողնաշար կենդանիներից հատկապես միջատներն ավելի սերտ կապ ունեն կոնկրետ կենսատույերի հետ, մասնավորապես՝ ունենալով կերային (տրոֆիկ) կապեր դրանց ծառաթփային բուսականության հետ: Այդ իսկ պատճառով հավելվածում հիմնականում բերվում են տվյալներ միջատների, ինչպես նաև եզակի ողնաշարավորների մասին:

Ծավ գետի ավազանի սոսու պուրակ: Կովկասում միակ նման բնակմիջավայրը գտնվում է Հարավային Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում՝ Ծավ գետի ափին, ծովի մակերևույթից 650-750 մ բարձրության վրա: Այստեղ գերակշռում է *Platanus orientalis*-ը, իսկ ծառուտի կազմում ներկայացված են *Juglans regia*, *Celtis caucasica*, *Ficus carica*, *Rubus armeniacus*, *Punica granatum*, *Malus orientalis*, *Crataegus stevenii*, *C. pentagyna*, *Teucrium hyrcanicum*, *Euonymus velutina*, *Swida iberica*, *Ranunculus cicutarius* և այլն: Բնակմիջավայրը համարվում է «Սոսու պուրակ» պետական արգելավայր: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ «Շիկահող» արգելոց:

***Populus euphratica*-ի գերակշռությամբ մերձափնյա անտառներ:** Այս էկոհամակարգերի ֆաունան բնութագրվում է G1.37 տարատեսակի համար վերը նկարագրված տեսակային կազմով: Հայաստանում հազվագյուտ բնակմիջավայրեր են, որոնք համեմատաբար լավ են ներկայացված միայն Արաքս գետի հովտում՝ Մեղրիի ֆլորիստիկ շրջանում, բացի այդ հայտնի է ևս մեկ բնակմիջավայր Երևանի ֆլորիստիկ շրջանում՝ Ուրցի լեռնաշղթայի ոչ մեծ կիրճում: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ «Արևիկ» ազգային պարկ:

Հյուսիսային Հայաստանի կաղամախու պուրակներ: Առավել բնորոշ բնակմիջավայրերը հանդիպում են Վերին Ախուրյանի ֆլորիստիկ շրջանում՝ Աշոցքի սարահարթում, որտեղ մարգագետնատափաստանային բուսականության մեջ աճում են առանձին ոչ մեծ պուրակներ՝ գրեթե միատարր *Populus tremula*-ի ծառուտներով: Ծառուտի կազմում սակավաթիվ առանձնյակներով ներկայացված են *Quercus macranthera*, *Salix caprea*, *Viburnum lantana*, *Lonicera caucasica*, *Rubus idaeus*, *Prunus divaricata*, խոտածածկում առատ են *Poa*

longifolia, *P. nemoralis*, *Potentilla recta*, *Chamaenerion angustifolia*, *Fritillaria caucasica*, *Primula macrocalyx*, *Fragaria vesca*, *Allium victorialis*, *Primula amoena*: Տեղաբաշխումը՝ Շիրակի մարզ՝ «Արփի լիճ» ազգային պարկ, Լոռու մարզ՝ Ստեփանավանի, Դսեղի, Գուգարքի անտառտնտեսություններ, Տավուշի մարզ՝ Արծվաբերդի, Նոյեմբերյանի անտառտնտեսություններ:

Լորենու ծառուտներ: Անտառներ, որտեղ գերակշռում է *Tilia spp.*: Տարածված են չոր, երբեմն խոնավ, բայց ոչ ափամերձ կայուն հողերի վրա: Հայաստանում հանդիպում են *Tilia cordata* և *T. caucasica*-ի գերակշռությամբ բնակմիջավայրերը, որոնք հանդիպում են միայն Հյուսիսային Հայաստանում և զբաղեցնում փոքր տարածքներ: Սովորաբար լորենու անտառների հատվածները հանդիպում են հաճարենու և կաղնու անտառներում: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ Դսեղի, Գուգարքի, Նոյեմբերյանի անտառտնտեսություններ:

Կաղնու-բոխա-արջատիլենու անտառ: *Quercus macranthera* և *Carpinus betulus*-ի անտառի հատված, որի ծառուտի կազմի մեջ առատորեն ներկայացված է *Corylus colurna*-ն: Այն հանդիպում է Իջևանի ֆլորիստիկ շրջանում: Բուսականության կազմում ներկայացված են *Fraxinus excelsior*, *Viburnum lantana*, *Mespilus germanica*, *Sorbus aucuparia*, ինչպես նաև առանձին նմուշներով հանդիպում է *Taxus baccata*: Խոտածածկում լավ են ներկայացված հետևյալ խոլորձազգիները՝ *Ophrys oestriфера*, *Anacamptis pyramidalis*, *Cephalanthera rubra*: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ Իջևանի անտառտնտեսություն:

Պոնտո-կովկասյան սոճու անտառներ: Այս անտառները կազմված են *Pinus sylvestris* խմբի սոճիներից, որոնք սովորաբար որոշվում են *P. sylvestris ssp. hamata*, *P. sylvestris ssp. sylvestris*, կամ երբեմն որպես առանձին տեսակներ՝ *P. kochiana*, *P. hamata*, *P. armena*: Հայաստանում սոճու անտառները չեն զբաղեցնում ընդարձակ մակերեսներ, հանդիպում են միայն Հյուսիսային Հայաստանում, տարածված են ծովի մակերևույթից 1000-1800 մ բարձրությունների վրա: Սովորաբար լիովին գերակշռում է *Pinus kochiana*-ն, որին ոչ մեծ քանակությամբ կարող են միանալ *Quercus macranthera*, *Q. iberica*, *Sorbus aucuparia*, *Salix caprea*, *Pyrus caucasica*, *Populus tremula*, *Fagus orientalis*: Ենթանտառը գրեթե զարգացած չէ, հազվադեպ հանդիպում են *Rosa*, *Crataegus*, *Rubus* ցեղերի տարբեր տեսակներ: Խոտածածկում ներկայացված են *Poa nemoralis*, *Carex humilis*, *Medicago sativa*, *Dactylis glomerata*: Հյուսիսային Հայաստանի սոճու բնական անտառների հետ սերտորեն կապված է ՀՀ Կարմիր գրքում գրանցված թռչնատեսակ խաչկտուցը (*Loxia curvirostra*): Սոճու հասուն և գերհասուն ծառերի բնափայտում զարգանում են Հայաստանում խիստ հազվադեպ (հայտնի են եզակի նմուշներով) ոսկերզեզներ *Chalcophora mariana* և *Phaenops cyanea*: Այս ծառատեսակների հետ կապված են նաև որոշ կեղևակերներ (*Ips* և *Blastophagus* ցեղերից), որոնք հայտնի են որպես վտանգավոր վնասատուներ, սակայն Հայաստանում՝ համեմատաբար կայուն էկոհամակարգերում դրանք վնասակար նշանակություն գրեթե չունեն: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ «Դիլիջան» ազգային պարկ, Լոռու մարզ՝ Ստեփանավանի, Դսեղի, Գուգարքի անտառտնտեսություններ:

***Juniperus excelsa*-ի անատոլիական գիհու ծառուտներ:**

Հայաստանում գերակշռող տեսակ է համարվում *J. Polycarpus*-ը, որն ազգակցականորեն մոտ է *J. excelsa*-ին: Այս բնակմիջավայրը հանդիպում է Հայաստանում գրեթե ամենուր՝ ստորին լեռնային գոտուց մինչև մերձալպյան գոտի: Սովորաբար *J. polycarpus*-ի ծառուտները չեն ձևավորում խիտ հաստաբուն անտառային մացառուտներ, այլ ներկայացված են նոսրանտառների տեսքով տարբեր թեքության և դիրքադրության լանջերի վրա: Ծառուտի կազմում կախված շրջանից և տեղանքի բարձրությունից կարող են հանդես գալ *Quercus macranthera*, *Celtis glabrata*, *Rhamnus cathartica*, թփերից՝ *Berberis orientalis*, *Spiraea crenata*, *S. hypericifolia*, խոտածածկում սովորաբար տարածված են տափաստանային տեսակները՝ *Festuca valesiaca*, *Poa bulbosa*, *Stipa capillata*, *S. lessingiana*, *S. tirsia*, *Dactylis glomerata*, *Galium verum*, *Medicago sativa*, *Phleum phleoides* և այլն: Գիհու նոսրանտառները նախընտրելի բնադրավայրեր են սև անգղի (*Aegyptius monachus*) համար: Բացի այդ, բեզուարյան այծի (*Capra aegargus*) որոշ պոպուլյացիաներ օգտագործում են տարածքները որպես ձմեռային ապաստան: Գիհու բնափայտում զարգանում են Անդրկովկասի էնդեմիկ ոսկեբզեզը՝ *Anthaxia caucasica* և Հայաստանում սակավաթիվ երկարաբեղիկը՝ *Semanotus ruscicus*:

Փարշահոտ գիհու ծառուտներ: *Juniperus foetidissima*-ի գերակշռությամբ անտառային համակեցություններ են, որոնք հանդիպում են Բալկանյան թերակղզում, Կիպրոսում, Անատոլիայում և Կովկասում: Հայաստանում բավական հազվագյուտ բնակմիջավայրեր են, ներկայացված են

Իջևանի, Հարավային Զանգեզուրի և Մեղրիի ֆլորիստիկ շրջաններում: Իրենցից ներկայացնում են նոսրանտառներ, որտեղ *J. foetidissima*-ին հաճախ միանում են *J. polycarpus*, *J. communis*, *Quercus iberica*, *Q. araxina*, *Rhamnus pallasii*, *Lonicera iberica* և այլն: Բացի զիհու հետ կապված վերոհիշյալ կենդանատեսակներից, Մեղրու տարածաշրջանում զիհու նոսրանտառներից հայտնի են ՀՀ Կարմիր գրքում գրանցված Հայաստանի էնդեմիկներ՝ ոսկերզեզներ *Anthaxia superba*, *A. breviformis* և *Sphaerobothris aghababiani*, *Entomogonus amandanus* սևամարմինը և *Asias aghababiani* երկարաբերդիկը: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ «Շիկահող» արգելոց, «Արևիկ» ազգային պարկ, Կապանի անտառտնտեսություն, Տավուշի մարզ՝ Իջևանի անտառտնտեսություն:

Հայաստանի կենու մեկուսացված պուրակներ: Հայտնի է այսպիսի 3 համեմատաբար մեծ կենու պուրակ Իջևանի և 1-ը Հարավային Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Հյուսիսային Հայաստանում կենու պուրակները հիմնականում տարածվում են լեռնային գետերի 2-3-րդ դարավանդներում կամ հաճաբենու անտառների լանջերին, իսկ Հարավային Հայաստանում՝ կաղնու անտառների լանջերին: Հիմնականում տարածված են միջին լեռնային գոտում, որի բուսականության կազմում հանդիպում են *Fagus orientalis*, *Carpinus betulus*, *Tilia cordata*, *Acer campestre*, *Fraxinus excelsior*, իսկ խոտածածկի համար բնորոշ են *Dryopteris filix-mas*, *Asplenium scolopendrium*, *Impatiens noli-tangere*, *Asperula odorata*, *Arum orientale*, *Lamium album*, *Geranium robertianum*: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ «Դիլիջան» ազգային պարկ, Սևքարի անտառտնտեսություն, Սյունիքի մարզ՝ «Շիկահող» արգելոց:

***Taxus baccata* և *Fagus orientalis*-ի խառը ծառուտներ:**

Բավականին սովորական բնակմիջավայրեր են Հյուսիսային Հայաստանի համար: Ի տարբերություն կենու պուրակի տարածված են հիմնականում գետային դարավանդների վրա, հարմարված են թեք լանջերին աճող հաճարենու անտառներին, զբաղեցնում են ոչ մեծ մակերեսներ: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ «Դիլիջան» ազգային պարկ, Արծվաբերդի, Իջևանի, Սևքարի, Նոյեմբերյանի անտառոտեսություններ, Լոռու մարզ՝ Գուգարքի անտառոտեսություն:

***Rhododendron caucasicum*-ի թփուտները Հայաստանում:** Այս բնակմիջավայրերը հանդիպում են միայն Հյուսիսային Հայաստանում, հարմարված են լեռնաշղթաների համեմատաբար հարթ հյուսիսային լանջերին, զբաղեցնում են ոչ մեծ մակերեսներ մերձալպյան գոտում, սովորաբար անտառի վերին սահմանից վեր, սակայն Փամբակի լեռնաշղթայում մրտավարդի թփերը ներթափանցում են կաղնուտներ: Մրտավարդի առավել բնութագրական ուղեկիցը *Vaccinium myrtillus*-ն է, բացի այդ այստեղ հանդիպում են սովորական մերձալպյան մարգագետնային այնպիսի բուսատեսակներ, ինչպիսին են *Daphne glomerata*, *Poa nemoralis*, *P. longifolia*, *Anthoxanthum odoratum*, *Nardus stricta*, *Geranium sylvaticum*, *Pedicularis condensata*, *Scabiosa caucasica*, *Aetheopappus pulcherrimus*, *Coeloglossum viride*, *Myosotis alpestre*, *Actaea spicata* և այլն: Ծաղկունյանց լեռնաշղթայի վրա, Մարգահովիտ համայնքի շրջակայքում գտնվող բնակմիջավայրն առանձնացվել է որպես արգելավայր և համարվում է ԿԲՏ: Տեղաբաշխումը՝ Լոռու մարզ՝ Գուգարքի, Դսեղի, Ստեփանավանի անտառոտեսություններ:

***Juniperus sabina*-ի թփուտներ:** Հայաստանի համար հազվագյուտ բնակամիջավայրեր են, քանի որ կազակական գիհին Հայաստանի բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակ է: Հայտնի է ընդամենը 3 նման բնակամիջավայր՝ Արեգունու լեռնաշղթայում, Սելիմի լեռնանցքի շրջակայքում և Մեղրիի ֆլորիստիկ շրջանում: Տեղաբաշխումը՝ Գեղարքունիքի մարզ՝ Ճամբարակի անտառտնտեսություն, Վայոց ձորի մարզ՝ Վայոց ձորի անտառտնտեսություն, Սյունիքի մարզ՝ «Արնիկ» ազգային պարկ:

Մերձալպյան կորաբուն անտառներ: Այս բնակամիջավայրերը հանդիպում են Հյուսիսային և Կենտրոնական Հայաստանում: Իրենցից ներկայացնում են ցածրած ծառերի և թփերի մացառներ, որոնք տեղաբաշխած են անտառի վերին սահմանի և մերձալպյան մարզագետինների շփման գոտում: Հյուսիսային Հայաստանում այս բնակամիջավայրերի ծառաթփային կազմում առավել հաճախ գերակշռում են *Sorbus aucuparia*, *Betula litwinowii*, *Acer trautvetteri*, *Rubus idaeus*, *R. saxatilis*, *Malus orientalis*, *Viburnum lantana*, *Pyrus caucasica*: Կենտրոնական Հայաստանում և Դարեւեգիսի ֆլորիստիկ շրջանում այս համակեցությունները փոխարինվում են ավելի քսերոֆիլ տիպերով, որոնց կազմում սկսում են գերակշռել այլ տեսակներ՝ *Sorbus* (*S. persica*, *S. graeca*), *Pyrus*, *Crataegus*: Տեղաբաշխումը՝ Տավուշի և Լոռու մարզեր՝ բոլոր անտառտնտեսություններ, «Դիլիջան» ազգային պարկ:

Տանձենու նոսրանտառներ: Հայաստանին բնորոշ բնակամիջավայրեր են: Ընդ որում, եթե Հյուսիսային Հայաստանում հանդիպում են հիմնականում *Pyrus caucasica*-ի գերակշռությամբ համակեցությունները, ապա Կենտրոնական և Հարավային Հայաստանում եղիֆիկատորների կազմը

զգալիորեն ավելի բազմազան է՝ *Pyrus syriaca*, *P. salicifolia*, *P. raddeana*, *P. daralaghezi*, *P. takhtadjanii*, *P. zangezura*, *P. pseudosyriaca* և այլն: Որպես յուրահատուկ տեսակ պետք է նշել խիստ հազվագյուտ (աշխարհի միջատաբանական հավաքածուներում ներկայացված մոտ 10 նմուշներով) տանձենիների օլիգոֆագ տեսակ ոսկերզեզ *Anthaxia holoptera*, որը Հայաստանում գրանցվել է Կապանի և Իջևանի տարածաշրջաններում: Դարելեզիսի ֆլորիստիկ շրջանում, Հերհեր համայնքի հարակից տարածքում առանձնացված է «Հեր-հերի» արգելավայրը և նշվում է որպես ԿՖՏ: Տեղաբաշխումը՝ Տավուշի մարզ՝ Արծվաբերդի, Իջևանի անտառոտնտեսություններ, Արարատի մարզ՝ «Խոսրովի անտառ» արգելոց, Վայոց ձորի մարզ՝ Վայոց ձորի անտառոտնտեսություն, Սյունիքի մարզ՝ Սիսիանի, Սյունիքի անտառոտնտեսություններ, «Արևիկ» ազգային պարկ:

Նոենու նոսրանտառներ: Բավականին հազվագյուտ բնակմիջավայրեր են, որոնք առավել լավ ներկայացված են Հայստանի Սյունիքի մարզում, սակայն հանդիպում են և հանրապետության հյուսիսում: Ծառերի շարահարկում գերակշռում է *Punica granatum*, զգալիորեն քիչ քանակով մասնակցում են *Ficus carica*, *Celtis glabrata*, *Paliurus spina-christi*, *Pistacia mutica*, խոտածածկում ներկայացված են *Bothriochloa ischaemum*, *Festuca valesiaca*, *Nonea lutea*, *Heliotropium ellipticum*, *Iris lineolata*: Այս բնակմիջավայրերով Որոտան գետի կիրճի լանջերի հատվածը առանձնացված է որպես ԿՖՏ: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ Սիսիանի, Սյունիքի անտառոտնտեսություններ, «Արևիկ» ազգային պարկ:

Կարմրանների թփուտները Հայաստանում: Իրենցից ներկայացնում են *Tamarix ramosissima*, *T. smyrnensis*, *T.*

octandra տեսակների համակեցություններ ջրահոսքերի երկայնքնով, որոնք ամռանը չորանում են: Բնակմիջավայրը բավականին սովորական է Հայաստանի համար, սակայն զբաղեցնում է ոչ մեծ մակերեսներ և հաճախ խառնվում է տարբեր բարձրաբուն ուռենիների գերակշռությամբ համակեցությունների հետ: Կարմրանների թփուտներում ապրում են *Tamarix* ցեղի ներկայացուցիչների հետ կապված օլիգոտրոֆ բզեզներ, այդ թվում փղիկների (*Curculionoidea*) *Coniatus* և *Nanophies* ցեղերի երկուական ներկայացուցիչներ, *Cryptocephalus* ցեղի 3 տեսակ, ինչպես նաև ոսկեբզեզներից *Sphenoptera mesopotamica* և Հայաստանում խիստ հազվագյուտ *S. balassogloi* տեսակները: Տեղաբաշխումը՝ Սյունիքի մարզ՝ «Արնիկ» ազգային պարկ, Վայոց ձորի մարզ՝ Վայոց ձորի անտառտնտեսություն:

Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունները ըստ անտառտնտեսությունների, 2006-2010 թթ-ի ԱԿՊ-ների համաձայն (հա)

N	Անտառտնտեսության անվանումը	Ջրապաշտպանական անտառներ	Հակակեղև անտառներ	Հատումներից զերծ մնացած անտառներ (կուսական)	Բնակչության գոյության համար անհրաժեշտ անտառներ	Կենդանիների համար կարևոր սեզոնային բնակատեղեր
1	Նոյեմբերյանի	650	600	1563	1300	850
2	Իջևանի	600	1400		600	
3	Սևքարի	450	3300	1100	300	820
4	Արծվաբերդի	1470		1300	550	800
5	Դսեղի	1360	800	700	300	650
6	Լավվարի	2020	1000	1200	500	300
7	Գուգարքի	1000	1200	500	600	500
8	Ջիլիգայի	200	1500	350		450
9	Տաշիրի	200		500		380

10	Ստեփանավանի	530	350			
11	Գորիսի	350	2000	400		
12	Կապանի	1180	8500	1200	600	1500
13	Միսիանի	110	300			
14	Ճամբարակի	290	550			
15	Վայոց Ձորի	370	1800			500
16	Հրազդանի	320	5500		400	
	Ընդամենը	11100	28800	8813	5150	6750

**Պիլոտային տարածքում առանձնացված ԲԲԱԱ-ների
նկարագրությունը**

Ուղղեցույցի 3.3 բաժնում ներկայացված չափորոշիչների փորձարկման նպատակով Հայաստանում ընտրված պիլոտային անտառային տարածքում իրականացվել են աշխատանքներ՝ տարբեր տիպերի ԲԲԱԱ-ների ուսումնասիրության և առանձնացման ուղղությամբ: Պիլոտային տարածքի ընտրությունը կատարվել է շահագրգիռ կողմերի՝ WWF-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ ԲՊՆ-ի, հասարակական ու գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումների և խորհրդակցությունների միջոցով: Արդյունքում ընտրվել է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի անտառտնտեսությունը: Առկա խնդրահարույց հարցերը քննարկվել են անտառտնտեսության ղեկավարության և անտառապետների ու անտառապահների հետ: Անտառտնտեսության տարբեր հատվածներում կատարվել են նաև նախնական դաշտային ուսումնասիրություններ: Արդյունքում որոշվել է ընտրել 11425 հա մակերեսով պիլոտային տարածք, որն ընդգրկում է անտառածածկ լանդշաֆտներ Ոսկեպարի, Ջուջևանի և Շլորկուտի անտառապետություններում (քարտեզ 1): Պիլոտային տարածքի հիմնական ծառատեսակները ներկայացվում են քարտեզ 2-ում:

Առկա գրականության, ինչպես նաև բուսաբանական ու կենդանաբանական հավաքածուների տվյալների վերլուծության արդյունքում նախնական փուլում որոշվել են այն պոտենցիալ տարածքները, որոնք ամենայն հավանակա-

նությամբ ունեն տարբեր բնապահպանական արժեքներ: Այդ տարածքների դաշտային ուսումնասիրությունների արդյունքում պիլոտային տարածքում առանձնացվել և քարտեզագրվել են ԲԲԱԱ-ի հետևյալ տիպերը:

Տիպ ԲԲԱԱ 1. Անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանությունը (քարտեզ 3):

Տարածքում բացակայում են ԲՀՊՏ-ներ, ուստի **Ենթատիպ ԲԲԱԱ 1.1-ը** ներկայացված չէ:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.2. և 1.3. Հազվագյուտ ու անհետացող և էնդեմիկ տեսակների կուտակման վայրեր:

Պիլոտային տարածքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում ներառված 8 բուսատեսակ՝ *Corydalis marschalliana* (Անձխոտ Մարշալի), *Aristolochia iberica* (Արիստոլոխիա վրացական), *Corylus colurna* (Արջատիլենի), *Taxus baccata* (Կենի հատապտղային), *Clematis vitalba* (Հոտոտ խաղողատերև), *Galanthus artjuschenkoae* (Չնծաղիկ Արտյուշենկոյի), *Galanthus alpinus* (Չնծաղիկ ալպիական), *Atropa belladonna* (Մահամորմ), և 14 տեսակ կենդանիներ, այդ թվում 7 անողնաշար՝ *Parnassius mnemosyne* (Մնեմոզինա կամ սև ապոլոն), *Maculinea alcon* (Ալկոն կապտաթիթեռ), *Maculinea arion* (Արիոն կապտաթիթեռ), *Proserpinus proserpina* (Պրոզերպինա իլիկաթիթեռ), *Ctenicera pectinicornis* (Սանրաբեղ չրիական), *Isomira armena* (Հայկական ծաղկեփոշեկեր), *Xylocopa violacea* (Մանուշակագույն մեղու-ատաղձագործ) և 7 ողնաշարավոր կենդանատեսակ՝ *Plecotus auritus* (Գորշ ականջեղ), *Lutra lutra* (Ջրասամույր), *Ursus arctos* (Գորշ արջ),

Felis silvestris (Անտառակատու), *Aquila pomarina* (Փոքր ենթարծիվ), *Accipiter gentilis* (Ցախաքլորավոր), *Darevskia rostombekovi* (Ռոստոմբեկովի մողես): Թեև վերոհիշյալ կենդանատեսակների մի մասը ՀՀ Կարմիր գրքում ունի «Խոցելի» (VU) կարգավիճակ, սակայն նրանք համարվում են «զերակա» (առավել հրապուրիչ և աչքի ընկնող տեսակներ)՝ միաժամանակ ընդգրկված լինելով Բեռնի և/կամ Բոննի կոնվենցիաների հավելվածներում: Պիլոտային տարածքում լավ արտահայտված են 4 տեղամասեր, որտեղ նկատվում են այս տեսակների կուտակումներ (քարտեզ 3):

Պիլոտային տարածքում Հայաստանի էնդեմիկ բուսատեսակներ չեն հանդիպում, սակայն կան 3 տեսակի էնդեմիկ բզեզներ՝ սրամարմինը (*Claviger antoniae*), կոյաբզեզը (*Aphodius edithae*) և ցերիլոնիդ բզեզը (*Cerylon clavipes*), որոնց պոպուլյացիաների վայրերը նշվում են քարտեզ 3-ում:

Պիլոտային տարածքում որպես ԲԲԱԱ 1.2 և 1.3 առանձնացված 4 տեղամասերից երկուսում ներկայացված են բույսերի և կենդանիների հազվագյուտ տեսակները: Մյուս երկուսում հանդիպում են միայն կենդանիների հազվագյուտ և անհետացող տեսակներ. դրանք նույնպես շատ արժեքավոր են և պահպանության ու մոնիթորինգի կարիք ունեն:

ԲԲԱԱ 1.2. և ԲԲԱԱ 1.3 ենթատիպերի չափանիշներին համապատասխանող տեղամասեր ընդհանուր զբաղեցնում են 655 հա:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.4. Կենդանիների առանցքային սեզոնային ապրելավայրեր: Պիլոտային տարածքում լավ առանձնացված է 1174 հա հատված, որտեղ հանդիպում են խոշոր ողնաշարավոր կենդանիներ. ՀՀ կենդանիների

Կարմիր գրքում ընդգրված կամ չընդգրկված որոշ խոշոր և առավել հրապուրիչ և աչքի ընկնող տեսակներ (Գորշ արջ *Ursus arctos*, Կիստար *Capreolus capreolus*, Անտառակատու *Felis silvestris*, Լուսան *Lynx lynx*), նաև Բոննի Կոնվենցիայի հավելվածներում գրանցված չվող տեսակներ՝ չղջիկներ (Գորշ ականջեղ *Plecotus auritus*, Սրականջ գիշերաչղջիկ *Myotis blythi*) և թռչուններ (գիշատիչներ Մեծ ճուռակ *Buteo buteo*, Սև ցին *Milvus migrans*, Փոքր ենթարծիվ *Aquila pomarina*, ինչպես նաև Մոխրագույն ճանճորս *Muscicapa striata*):

Պիլոտային տարածքում առաջին տիպի բոլոր ենթատիպերի ԲԲԱԱ-ների ընդհանուր մակերեսը կազմում է 1829 հա:

Տիպ ԲԲԱԱ 2. Միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող խոշոր անտառային լանդշաֆտներ, որտեղ գոյություն ունեն բնականում հանդիպող տեսակների կենսունակ պոպուլյացիաները՝ իրենց բնորոշ տարածվածությամբ և առատությամբ:

Պիլոտային տարածքում առանձնացվել է ԲԲԱԱ 2-րդ տիպին համապատասխանող անտառային տեղամաս 1549.1 հա մակերեսով (քարտեզ 4): Նոյեմբերյանի անտառտնտեսության արխիվային փաստաթղթերի և աշխատակիցներից ստացված տեղեկությունների համաձայն սերմնային ծագման այս տարածքներն ավելի քան 50 տարի (նախորդ դարի 60-ական թթ-ից) ամբողջությամբ զերծ են մնացել որևէ տիպի անտառօգտագործումից: Անտառի միջին կազմը՝ 6.2 հաճարենի, 2.4 կաղնի, 1.3 բոխի, 0.1 լոբենի: Հիմնականում գերակշռում են հաճարենու և խոշորառեջ կաղնու հասունացող, հասուն և գերհասուն ծառուտները, միջին տարիքը մոտ 140

է, մասնատվածությունը՝ մոտ 8%, միջին լրիվությունը՝ 061: Տարածքի բնական պայմանները և Ոսկեպար գետի և գետակների առկայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում խոշոր և միջին չափի կաթնատունների կենսունակ պոպուլյացիաների ապահովման համար:

Տիպ ԲԲԱԱ 3. Անտառային տարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր: Պիլոտային տարածքում հայտնաբերվել են երեք փոքր տեղամաս, որտեղ ներկայացված են Հայաստանի հազվագյուտ անտառային էկոհամակարգեր (քարտեզ 5, տե՛ս հավելված 8):

Լորենու ծառուտները (G1.A5) բուֆերային գոտու հետ միասին զբաղեցնում են 16.3 հա: Հայաստանի համար հազվագյուտ, լավ վիճակում գտնվող այս անտառային էկոհամակարգում լիովին գերակշռում է լորենին՝ ձևավորելով գրեթե միատարր ծառուտ:

Պիլոտային տարածքում առկա կենու մեկուսացված պուրակը (G3.97B-AM) զբաղեցնում է 3.8 հա: Բարվոք վիճակում գտնվող այս ծառուտը գրեթե միատարր է, առանձին հատվածներում ներկայացված է մեռյալ ծածկոցով:

Կենու պուրակի շրջակայքում հայտնաբերվել են *Taxus baccata*-ի և *Fagus orientalis*-ի խառը ծառուտներ (G4.91-AM) 3.2 հա մակերեսով: Այս համակեցություններում լիովին գերակշռում է հաճարենին, սակայն կազմում ներկայացված է նաև կենին: Պիլոտային տարածքում վերջին երկու էկոհամակարգերը հարում են միմյանց՝ մեկը հանդիսանում է մյուսի շարունակությունը: Արդյունքում դրանց համար առանձնացվել է 16.6 հա մակերեսով ընդհանուր բուֆերային

գոտի՝ բնական անտառվերականգնումը և առաջին հերթին կենու վերականգնումն ապահովելու նպատակով:

Պիլոտային տարածքում հայտնաբերված երրորդ տիպի ԲԲԱԱ-ի ների (3 տեղամաս) ընդհանուր մակերեսը բուֆերային գոտու հետ միասին կազմում է 32.9 հա:

Տիպ ԲԲԱԱ 4. Անտառային տարածքներ, որոնք իրականացնում են պաշտպանական հատուկ գործառույթներ: Պիլոտային տարածքում առանձնացվել են 4-րդ տիպի ԲԲԱԱ-ի չափանիշներին համապատասխանող՝ ջրապաշտպան և հողապաշտպան նշանակության տեղամասեր (քարտեզ 6):

Պիլոտային տարածքով անցնող հիմնական գետի՝ Ոսկեպարի երկայնքով առանձնացվել են գետի երկու ափերով ձգվող 200 մ լայնությամբ ժապավենաձև հատվածներ (1105 հա), որոնք կատարում են ԲԲԱԱ 4.1. ենթատիպի անտառներին բնորոշ ջրապաշտպան դեր: Գետի երկու հիմնական վտակների երկայնքով առանձնացվել են 100 մ-ոց ժապավենաձև հատվածներ (234 հա), որոնք ունեն ջրապաշտպան և սելավապաշտպան նշանակություն: Վերը նշվածները ընդհանուր կազմում են 1339 հա: Մյուս վտակները շատ փոքր են, իսկ դրանց մի մասը ամռանը ցամաքում են: Այնուամենայնիվ դրանց մերձափնյա անտառային տարածքները պետք է լրացուցիչ ուսումնասիրվեն՝ դրանց ջրապաշտպան դերը պարզելու համար: Այսինքն այս փոքր վտակամերձ անտառները կարելի է գնահատել որպես ԲԲԱԱ 4.1 պոտենցիալ տարածքներ:

Պիլոտային տարածքում 30°-ից բարձր թեքությամբ լանջերի վրա հանդիպում են ԲԲԱԱ 4.2. ենթատիպի չափա-

նիշներին համապատասխանող փոքր հատվածներ (276 հա), որոնք կատարում են հողապաշտպան և հակաէրոզիոն/հակասողանքային գործառույթներ: Ի դեպ, 4.1 և 4.2 ենթատիպի անտառային տարածքները քարտեզի վրա մասամբ համընկնում են. մոտ 100 հա կազմող այդ անտառները կատարում են կրկնակի գործառույթ՝ ջրապաշտպան և հակաէրոզիոն:

Պիլոտային տարածքում հայտնաբերված չորրորդ տիպի ԲԲԱԱ-ների ընդհանուր մակերեսը կազմում է 1515.1 հա:

Տիպ ԲԲԱԱ 5. Անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են տեղական բնակչության կենսագործունեության համար: Պիլոտային տարածքին անմիջապես հարում է Ջուջևան համայնքը. ծխերի թիվը՝ 165, բնակչության հիմնական զբաղմունքը՝ հողագործություն և անասնապահություն: Բնակավայրը գազաֆիկացված չէ և ջեռուցման միակ աղբյուրը վառելիքայտն է: Շրջակա 5 կմ-ոց գոտին ընդգրկում է անտառի կողմնարդյունքով շատ հարուստ 2773.6 հա անտառային տարածքներ: Համայնքում գործում է անտառային պտուղ-հատապտուղների վերամշակման արտադրամաս:

Սահմանագատված 5-րդ տիպի անտառները պետք է լրացուցիչ ուսումնասիրվեն և ներկայումս կարող են համարվել պոտենցիալ ԲԲԱԱ 5 (քարտեզ 7):

Այսպիսով, պիլոտային տարածքում առանձնացվել են հինգ տիպի ԲԲԱԱ-ներ (քարտեզ 8). ԲԲԱԱ 1՝ 1829.9 հա, ԲԲԱԱ 2՝ 1549.1 հա, ԲԲԱԱ 3՝ 32.9 հա, ԲԲԱԱ 4՝ 1515.1 հա, ԲԲԱԱ 5՝ 2773.6 հա (նախնական գնահատում, անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը», Երևան, 2014

2. «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը», Երևան, 2015

3. ՀՀ Կարմիր գիրք, Երևան, 2010

4. Ֆայվուշ Գ., Քալաշյան Մ., Թամանյան Կ., Սահակյան Լ., Մարգարյան Ն., Կանդարյան Ա. Բնապահպանական Հատուկ հետաքրքրություն ներկայացնող պոտենցիալ տարածքների նույնականացման ծրագրի իրականացում «Էմերալդ ցանցը» Հայաստանում 2009-2011 թթ., Երևան, 2011 թ.

5. Браун Э. и др. Руководство по практическим вопросам выявления высоких природоохранных ценностей в природных и антропогенных экосистемах и ландшафтах. Перевод с англ. Всемирный фонд природы (WWF). – М., 2014

6. Варданян Ж.А. Деревья и кустарники Армении в природе и культуре, Ереван, 2003

7. Дженнингс С., Нуссбаум Р и др. Леса высокой природоохранной ценности. Практическое руководство. Перевод с англ. – М., 2005

8. Файвуш Г., Алексанян А. Местообитания Армении, Ереван, 2016

9. Яницкая Т. Практическое руководство по выделению лесов высокой природоохранной ценности в России / Всемирный фонд природы (WWF). – М., 2008

10. High conservation value forests: the concept in theory and practice, Reitbergen-McCracken J., Steinloegger G., Koon C. S., WWF International, 2007

11. Tamanyan K., E. Gabrielyan, G. Fayvush, M. Hovhannisyan, A. Nersesyan, I. Arevshatyan, N. Khanjyan, Vardanyan Zh. Red list of the endemic plants of the Armenia //In: Missouri Botanical Garden, p.37-66

12. <http://www.aspbirds.org>

13. <https://www.hayanttar.am>

14. <https://www.hcvnetwork.org>



About “ENPI East Countries FLEG II Program – Complementary Measures for Georgia and Armenia”

The “ENPI East Countries FLEG II Program – Complementary Measures for Georgia and Armenia”, supported by the Austrian Development Agency (ADA) with funds of Austrian Development Cooperation, is being implemented by the World Bank in partnership with WWF and IUCN. It complements the EU-funded FLEG II Program.

The objectives of the Program are to support Georgia and Armenia in strengthening forest governance through improving implementation of relevant international processes, enhancing their forest policy, legislation and institutional arrangements, and developing, testing and evaluating sustainable forest management models at the local level on a pilot basis for future replication.

«ENPI արևելյան երկրների FLEG II ծրագիր. Լրացուցիչ ֆինանսավորում Վրաստանին և Հայաստանին» ծրագրի մասին

«ENPI արևելյան երկրների FLEG II ծրագիր. Լրացուցիչ ֆինանսավորում Վրաստանին և Հայաստանին» ծրագիրը, որն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) աջակցությամբ և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ, իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից WWF-ի և ԲՊՄՄ-ի հետհամատեղ: Այն լրացնում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող FLEG II ծրագիրը:

Ծրագրի նպատակն է աջակցել Վրաստանին ու Հայաստանին բարելավելու անտառների կառավարումը՝ համապատասխան միջազգային գործընթացների իրականացման և անտառային քաղաքականության, օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքների բարելավման միջոցով, ինչպես նաև տեղական մակարդակով մշակել, փորձարկել և գնահատել անտառ կառավարման կայուն մոդելներ՝ պիլոտային հիմունքներով հետագա կրկնօրինակման համար:

About FLEG II (ENPI East) Program

The Forest Law Enforcement and Governance (FLEG) II European Neighbourhood and Partnership Instrument (ENPI) East Countries Program supports participating countries' forest governance. At the regional level, the Program aims to implement the 2005 St. Petersburg FLEG Ministerial Declaration and support countries to commit to a time-bound action plan; at the national level the Program will review or revise forest sector policies and legal and administrative structures; and improve knowledge of and support for sustainable forest management and good forest governance in the participating countries, and at the sub-national (local) level the Program will test and demonstrate best practices for sustainable forest management and the feasibility of improved forest governance practices at the field-level on a pilot basis. Participating countries include Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova, Russia, and Ukraine.


FLEG II (ENPI East) ծրագրի մասին

«Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ) Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման ծրագիր II» (FLEG II) աջակցում է մասնակից երկրներին բարելավել անտառների կառավարումը: Տարածաշրջանային մակարդակով ծրագիրը նպատակ ունի աջակցել մասնակից երկրներին 2005թ-ի Սանկտ Պետերբուրգի FLEG նախարարական հռչակագրի իրականացման գործում և ապահովել նախատեսված ժամկետներում գործողությունների ծրագրի, ինչպես նաև հետագա գործողությունների իրականացումը, ազգային մակարդակով ծրագիրը կդիտարկի կամ կվերանայի անտառային ոլորտի քաղաքականությունը, օրենսդրական և վարչական կառույցները, կաջակցի անտառների կայուն և արդյունավետ կառավարմանը մասնակից երկրներում, կբարելավի դրան առնչվող գիտելիքները, կփորձարկի և կներկայացնի անտառների կայուն կառավարման լավագույն փորձը և անտառների կառավարման բարելավման հնարավորությունը՝ փորձական հիմունքներով, դաշտային պայմաններում ենթաազգային մակարդակով: Մասնակից երկրներն են՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն և Ուկրաինա:

Project Partners/Ծրագրի գործընկերները

 <p>AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION</p>	<p>AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION</p> <p>Austrian Development Cooperation (ADC) supports countries in Africa, Asia, South Eastern and Eastern Europe as well as the Caribbean in their sustainable development. The Federal Ministry for Europe, Integration and Foreign Affairs (MFA) plans ADC strategies. Austrian Development Cooperation aims at reducing poverty, conserving natural resources and promoting peace and human security in partner countries. Long-term programmes and projects support help towards self-help. The ultimate goal is to bring about a sustainable improvement in conditions of life.</p> <p>www.entwicklung.at</p> <p>Ավստրիական զարգացման համագործակցությունը (ԱԶՀ) աջակցում է Աֆրիկայի, Ասիայի, Կենտրոնական Ամերիկայի, ինչպես նաև Հարավարևելյան ու Արևելյան երկրներին սոցիալական, տնտեսական և ժողովրդավարական կայուն զարգացման ապահովման գործում: Ավստրիայի արտաքին գործերի նախարարությունը պլանավորում է Ավստրիական զարգացման համագործակցության ծրագրերն ու ռազմավարությունները: Ավստրիական զարգացման գործակալությունը, որն իրականացնում է Ավստրիական զարգացման համագործակցության գործառնական հատվածը, այս ամենն իրագործում է հանրային հաստատությունների, ոչ պետական կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համատեղ:</p> <p>www.entwicklung.at</p>
 <p>THE WORLD BANK IBRD • IDA WORLD BANK GROUP</p>	<p>WORLD BANK</p> <p>The World Bank Group is one of the world's largest sources of knowledge and funding for its 188 member-countries. The organizations that make up the World Bank Group are owned by the governments of member nations, which have the ultimate decision-making power within the organizations on all matters, including policy, financial or membership issues. The World Bank Group comprises five closely associated institutions: the International Bank for Reconstruction and Development (IBRD) and the International Development Association (IDA), which together form the World Bank; the International Finance Corporation (IFC); the Multilateral Investment Guarantee Agency (MIGA); and the International Centre for Settlement of Investment Disputes (ICSID). Each institution plays a distinct role in the World Bank Group's mission to end extreme poverty by decreasing the percentage of people living on less than \$1.25 a day to no more than 3 percent, and promote shared prosperity by fostering the income growth of the bottom 40 percent for every country.</p> <p>www.worldbank.org , www.ifc.org , www.miga.org</p>

	<p>Համաշխարհային բանկ</p> <p>Համաշխարհային բանկը (WB) իր 188 անդամ-երկրներին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական աջակցության կենսական աղբյուրներից է: Կազմակերպությունները, որոնք ձևավորում են Համաշխարհային բանկը, պատկանում են անդամ-երկրների կառավարություններին: Վերջիններս ունեն որոշիչ ձայն կազմակերպությունների կառավարմանն առնչվող բոլոր հարցերում, ներառյալ կազմակերպությունների քաղաքականության որաշման, ֆինանսական և անդամակցության վերաբերյալ հարցերը: Համաշխարհային բանկի խմբի կազմում ընդգրկված են 5 սերտորեն փոխկապակցված կառույցներ՝ Զարգացման և վերակառուցման միջազգային բանկը (IBRD) և Զարգացման միջազգային ասոցիացիան (IDA), որոնք միասին ձևավորում են Համաշխարհային բանկը, ինչպես նաև Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Ներդրումների երաշխավորման բազմակողմանի գործակալությունը (MIGA) և Ներդրումների հետ կապված վեճերի լուծման միջազգային կենտրոնը (ICSID): Յուրաքանչյուր կառույց իր դերն է կատարում Համաշխարհային բանկի խմբի առաքելության իրագործման գործում, այն է՝ պայքարել ծայրահեղ աղքատության դեմ՝ նվազեցնելով մինչև 3%-ի այն մարդկանց թիվը, ովքեր օրական 1.25 ԱՄՆ դոլարից ցածր գումարով են գոյատևում և աջակցել ընդհանուր բարգավաճմանը՝ նպաստելով երկրների ծայրահեղ աղքատ խավի եկամուտների աճին:</p> <p>www.worldbank.org , www.ifc.org , www.miga.org</p>
	<p>IUCN</p> <p>IUCN, International Union for Conservation of Nature, helps the world find pragmatic solutions to our most pressing environment and development challenges. IUCN's work focuses on valuing and conserving nature, ensuring effective and equitable governance of its use, and deploying nature-based solutions to global challenges in climate, food and development. IUCN supports scientific research, manages field projects all over the world, and brings governments, NGOs, the UN and companies together to develop policy, laws and best practice. IUCN is the world's oldest and largest global environmental organisation, with more than 1,200 government and NGO members and almost 11,000 volunteer experts in some 160 countries. IUCN's work is supported by over 1,000 staff in 45 offices and hundreds of partners in public, NGO and private sectors around the world.</p> <p>www.iucn.org</p>

	<p>Բնության պահպանության միջազգային միություն</p> <p>Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN) նպաստում է աշխարհում առկա բնապահպանական և զարգացման հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Գործունեության ոլորտներն են կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը, էներգիան, բնակչության կենսապայմանները և «կանաչ տնտեսությունը»՝ հետազոտական աշխատանքների ու աշխարհի տարբեր երկրներում իրականացվող ծրագրերի և կառավարության, ՀԿ-ների, ՄԱԿ-ի և ձեռնարկությունների միավորման միջոցով քաղաքականություն ու օրենսդրություն մշակելու և լավագույն փորձ ձեռքբերելու համար: Բնության պահպանության միջազգային միությունն աշխարհում ամենավաղ հիմնադրված խոշոր բնապահպանական կազմակերպություններից է և 160 երկրներում ունի կառավարությունը և ՀԿ սեկտորը ներկայացնող ավելի քան 1200 անդամ, ինչպես նաև շուրջ 11 000 կամավոր փորձագետ: Միության գործունեությունն իրականացնում են աշխարհի 45 գրասենյակների 1000 աշխատակիցները՝ համագործակցելով պետական կառույցների, ՀԿ-ների և մասնավոր սեկտորը ներկայացնող հարյուրավոր գործընկերների հետ:</p> <p>www.iucn.org</p>
	<p>WWF</p> <p>WWF is one of the world's largest and most respected independent conservation organizations, with almost 5 million supporters and a global network active in over 100 countries. WWF's mission is to stop the degradation of the planet's natural environment and to build a future in which humans live in harmony with nature, by conserving the world's biological diversity, ensuring that the use of renewable natural resources is sustainable, and promoting the reduction of pollution and wasteful consumption.</p> <p>www.panda.org</p> <p>Բնության համաշխարհային հիմնադրամ</p> <p>Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) աշխարհի ամենախոշոր և ճանաչված անկախ բնապահպանական կազմակերպություններից է, որն ունի մոտ 5 միլիոն աջակից և 100 երկրներում գործող համաշխարհային ցանց: WWF-ի առաքելությունն է դադարեցնել երկրի բնական միջավայրի վատթարացումը և կառուցել այնպիսի ապագա, որտեղ մարդիկ ու բնությունն ապրում են ներդաշնակ պահպանելով մոլորակի կենսաբազմազանությունը, ապահովելով վերականգնվող բնական պաշարների կայուն օգտագործումը և նվազեցնելով աղտոտումն ու բնական պաշարների անխնա սպառումը:</p> <p>www.panda.org</p>

Ժիրայր Հմայակի Վարդանյան, Տատյանա Ստեփանի Դանիելյան,
Գեորգի Մարկի Ֆայվուշ, Մարկ Յուրիի Քալաշյան,
Անդրանիկ Հայկազի Ղուլիջանյան, Արամ Էմիլի Գևորգյան,
Սիրանուշ Ռոբերտի Գալստյան

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅՄԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Zhirayr Vardanyan, Tatyana Danielyan, George Fayvush,
Mark Kalashyan, Andranik Ghulijanyan,
Aram Gevorgyan, Siranush Galstyan

**PRACTICAL GUIDE ON IDENTIFICATION
OF HIGH CONSERVATION VALUE
FORESTS IN ARMENIA**


Թուղթը՝ կավճապատ: Չափսը՝ 60x84 1/16:
Տպագրական 7.75 մամուլ:
Տպաքանակ՝ 200:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:


**ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ**
հրատարակչություն




Թումանյան 12, 3,
(37410) 52 08 48
56 08 41
info@editprint.am




Քարտեզ 1. ԲԲԱԱ առանձնացման համար ընտրված պիլոտային տարածք




Քարտեզ 2. Պիլոտային տարածքում գերակշռող ծառատեսակներ




Քարտեզ 3. Պիլոտային տարածքում բացահայտված առաջին տիպի ԲԲԱԱ-ներ




Քարտեզ 4. Պիլոտային տարածքում բացահայտված երկրորդ տիպի ԲԲԱԱ-ներ




Քարտեզ 5. Պիլոտային տարածքում բացահայտված երրորդ տիպի ԲԲԱԱ-ներ



Քարտեզ 6. Պիլտտային տարածքում բացահայտված չորրորդ տիպի ԲԲԱԱ-ներ



Քարտեզ 7. Պիլոտային տարածքում բացահայտված հինգերորդ տիպի ԲԲԱԱ-ներ



Քարտեզ 8. Պիլոտային տարածքում բացահայտված տարբեր տիպերի ԲԲԱԱ-ներ